ՀԱՍՄԻԿ ԱՓԻՆՅԱՆ

ՍԻՐՈ ԵՐԳԻՋԸ.
ԱՇՈՒՂ ԻԳԻԹ

Երևան, 2 0 0 9

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

արվեստագիտության թեկնածու Հ. Հարությունյան

Խմբագիրներ՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ս. Հայրապետյան

արվեստագիտության թեկնածու՝ Ա. Բաղդասարյան

Հասմիկ Ափինյան

Սիրո երգիչը. աշուղ Իգիթ (պատ. խմբագիր Հ. Հարությունյան), ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն,- Երևան, «Գիտություն», 2009, էջ 104 + 5 էջ ներդիր:

Գիրքը նվիրված է XXդարի երկրորդ կեսի հայ անվանի աշուղ Իգիթի (Գեղամ Մարտիրոսյան) կյանքին ու ստեղծագործությանը: Առաջին անգամ համակողմանիորեն ներկայացված է աշուղի գործունեության բոլոր ոլորտները, ինչպես նաև հինգ տասնյակի հասնող անտիպ երգերը:

Գիրքը նախատեսված է հայ աշուղական արվեստով հետաքրքրվող մասնագետների և ընթերցողների լայն շրջանակի համար:

@ Ափինյան Հ. Պ , Երևան, «Գիտություն» հրատ.

Երկու խոսք

Հայ աշուղական երգը դարերի խորքից եկող ինքնատիպ արվեստ է, որն անցել է զարգացման բարդ ու երկարատև ճանապարհ: Իբրև ստեղծագործական կենդանի գործընթաց՝ ժամանակի ընթացքում հարստացել է, փոփոխվել և արմատներով խարսխվելով ազգային երաժշտամտածողության հիմքին՝ հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործությանը, ձեռք է բերել ուրույն, սեփական դիմագիծ:

19-րդ դարի վերջերին հայ մեծանուն աշուղ Ջիվանու հաստատած սկզբունքներն իրենց ներգործուն ազդեցությամբ կանխորոշեցին ավանդութային այն հստակ ճանապարհը, որով հետագայում քայլեցին նոր ժամանակների երգիչ-բանաստեղծները:

Խորհրդային տարիները հայ ազգային աշուղական երգարվեստի զարգացման կարևոր ժամանակահատված էին, երբ ասպարեզ եկած երգիչ-բանաստեղծները՝ Խայաթը, Աշխույժը, Ռազմիկը, Հրկեզը, Սմբատը, Գրիգորը և ուրիշներ, իրենց երգարվեստով հող նախապատրաստեցին Հավասի, Աշոտ, Շահեն աշուղների «եռաստղ համաստեղության» գործունեության համար: Այս եռյակի ստեղծագործության մեջ էլ բյուրեղացան և որոշակիացան սկզբունքներ, որոնք և բնութագրական նշանակություն ունեցան այդ արվեստի հետագա զարգացման համար: Անվիճելի է, որ նոր ժամանակների երգիչների ստեղծագործությունը խարսխված է Ալեքսանդրապոլի դպրոցի ավանդույթներին: Ակունքը՝ հայ ազգային ժողովրդական երգային բառապաշարն է, բայց այլ գույներով ու մտածողության բոլորովին թարմ շնչով: Սա թերևս ժամանակի հետ առնչվող նոր մոտիվների առկայությամբ էր պայմանավորված,առավելապես ժամանակակից մարդու հուզաշխարհի, նրա զգացմունքների բազմաբնույթ արտացոլմամբ:

Ազատ ու անկախ հայրենիք, կառուցվող նոր քաղաք, հավերժական սեր էր գովերգում նաև նույն ժամանակների երգիչ աշուղ Իգիթը, որի անունը միշտ չէ, որ հիշատակվում է խորհրդային շրջանի աշուղների շարքում: Ի տարբերություն իր սերնդակից ու գրչակից ընկերների, որոնք, գործունեությունը սկսելով ծննդավայրում, հետագայում կենտրոնացան մայրաքաղաքում, Գեղամ Մարտիրոսյանը մնաց հայրենի քաղաքում և

մինչև կյանքի վերջն ապրեց ու հիմնականում ստեղծագործեց Լենինական - Գյումրիում:

Իգիթը սիրված և հանրաճանաչ աշուղ է: Նրա երգերը բերանացի երգում են թե՛ քաղաքային, թե՛ գյուղական միջավայրերում, հնչում են ռադիոյով, հեռուստատեսությամբ: Մինչ օրս, սակայն, նրա ստեղծագործությունը խորությամբ չի ուսումնասիրվել: Նրա երգերի մեծ մասը պահպանվում է ժապավենների վրա ձայնագրված, մի մասն էլ ձեռագիր-սևագիր վիճակում է: Հրատարակված միակ գիրքը «Շիրակն իմ մուսան» ժողովածուն է՝ կոմպոզիտոր Ազատ Շիշյանի ձայնագրություններով, որում ընդգրկված է աշուղի երգանիի մի չափազանց համեստ հատվածը, ընդամենը 35 երգ,[1] մինչդեռ Գեղամ Մարտիրոսյանի եղանակավորած երգերի թիվը հասնում է մոտ 250-ի: Առանձին նմուշներ էլ հրատարակվել են մեկ-երկու այլ ժողովածուներում՝[2] հիմնականում քաղված վերոհիշյալ գրքից:

Աշուղի ստեղծագործությանը վերաբերող որևէ երաժշտագիտական հետազոտություն չկա: Մեր հեղինակած հոդվածները նվիրված են մասնավոր խնդիրների:[3] Իգիթի երգերի վերաբերյալ մի փոքրիկ դիտարկում կա նաև Ք. Քուշնարյանի գրքում:[4]

Սույն աշխատության մեջ առաջին անգամ փորձել ենք ներկայացնել աշուղ Իգիթ ստեղծագործողին: Անդրադարձել ենք ինչպես հրատարակված, այնպես էլ մոտ վեց տասնյակի հասնող անտիպ երգերին: Այդ երգերը գրառել և վերծանել ենք աշուղի հետ համատեղ աշխատանքի ընթացքում: Համոզված ենք, որ դրանց հրատարակությամբ

---

[1] ***Գուսան Իգիթ***, Շիրակն իմ մուսան, Երգերի ժողովածու, ձայնագրությունը՝ Ա. Շիշյանի, Եր., 1968:

[2] Հայրենասիրական երգեր (ինքնուս ստեղծագործողների, նաև աշուղների)՝ նվիրված Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի 25-ամյակին, կազմեց և խմբագրեց Ա.Մանուկյանը, ժող. ստեղծագործության տուն, Եր., 1942, էջ 41: Երգարան, Եր., 1993, էջ 471-473; Հայրենական մեծ պատերազմը հայ ժող. և գուսանական երգերում, կազմողներ Մ. Բրուտյան, Ա. Փահլևանյան, Եր., 1995, էջ 31, 104:

[3] ***Հ.Ափինյան***, Իգիթը Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի ավանդույթների ժառանգորդ, Գիտաժողով՝ նվիրված Երևանի կոնսերվատորիայի ժող.ստեղծագործության կաբինետի հիմնադրման 30-ամյակին, Գիտական զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 2000, էջ 5: Նույնի՝ Աշուղ Իգիթի երգերը, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.6, Գյումրի, 2003, էջ 99: Նույնի՝ Աշուղական երգի տաղաչափական արվեստի մի քանի հարցեր Իգիթի երգերում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 8, Գյումրի, 2005, էջ 105: Իգիթի ստեղծագործության ընդհանուր բնութագրին է նվիրված նաև երաժշտագետ Լ.Դարբինյանի ավարտաճառը՝ գրված Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում (ղեկավար՝ Հ.Ափինյան):

[4] ***Кушнарев Х.*** Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, стр. 309.

արժեքավոր նմուշներով կհամալրվեն ոչ միայն աշուղի երգային ժառանգությունը, այլև հայ աշուղական երգի գանձարանը:

Նշենք, որ աշուղ Իգիթի անձնական արխիվը բավական ընդգրկուն է գրական, երաժշտական բազմազան նյութերով: Դրանց մի մասը պահպանվում է Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ֆոնդերում, մյուսները՝ ընտանեկան հավաքածուում:

Աշուղ Իգիթի կյանքը

Գեղամ Մարտիրոսի Մարտիրոսյանը (աշուղ Իգիթ) ծնվել է 1908թ. մարտի 4-ին, Ալեքսանդրապոլում՝ հայտնի երաժիշտների ընտանիքում: Պապը աշուղ Մալուլն էր,[5] հայրը՝ չալոչի Մարտիրոսը, քաղաքի ճանաչված երաժիշտներից էր, որ տիրապետում էր մի քանի նվագարանի: Ուներ շատ հնչեղ և գեղեցիկ ձայն, ինչի շնորհիվ էլ սպասված հյուր էր քաղաքի տարբեր հավաքույթներում, հարսանիքներում, խնջույքներում: Մարտիրոսյանների տանը երգելն ընդհանրապես առօրյա էր, պարզապես՝ կենսաձև: Տատը՝ Շողակաթը, երկար ժամանակ որպես ընտանեկան սրբություն ամուսնու՝ «քյաշանի բողչի» մեջ խնամքով փաթաթած ձեռագիր փոքրիկ դավթարը պահում էր կոմոդի դարակում ու երբեմն-երբեմն հանելով այնտեղից՝ թոռների համար երգում, նաև սովորեցնում էր մեծ պապի խրատական ղոշմաներն ու դաստանները:

Գեղամի մայրը՝ Հայաստան Մարտիրոսյանը, կրթություն էր ստացել Ալեքսանդրապոլի Արղության օրիորդաց դպրոցում և առանձնահատուկ սեր ուներ երաժշտության հանդեպ: Հիացմունքով ու մեծ ոգևորությամբ էր վերհիշում հայկական ազգային առաջին օպերայի՝ Ա.Տիգրանյանի «Անուշ»-ի բեմադրությունը և ինքն էլ իր գեղեցիկ ձայնով, մեծ զգացմունքով երգում էր կտորներ օպերայից:

Աշուղ Իգիթն իր հուշերում գրում է. «Տատս լավ ձայն ուներ: Հաճախ էր իր հոր երգերից երգում՝ «Ի քենե հան իմ սիրտ», «Բավ է

[5] Աշուղ Մալուլ կամ Մալիլ (արաբ.՝ խեղճ): Իսկական անունը՝ Գալուստ Սարգսյան, ծնվել է Կարսում 1823թ.: Հետագայում գաղթել և բնակություն է հաստատել Ալեքսանդրապոլին մերձակա Ղանլիջա (այժմ՝ Մարմաշեն) գյուղում: Նվագել է ջութակ, հորինել երգեր հայերեն, թուրքերեն, վախճանվել է 1887թ.:

ցուցանես զարդերդ», «Ծույլ և անհոգ երկչոտ էրիկ մարդիցը» և այլն, հետն էլ բացատրում էր, թե աշուղական ինչ կանոնով է հորինված այս կամ այն երգը»:[6] Այնուհետև շարունակելով աշուղը գրում է. «Էն ժամանակ կարծես բոլորն էին երգում: Մայրս էլ Շերամի երգերի երկրպագուն էր, անընդհատ գեղգեղում էր տանը «Շորորա՛, թառլա՛նս», «Արխալուղդ ո՞վ է կարել»: Հաճախ մի երգ էլ էր երգում՝ «Տեր Սարգիսենց Ալեքսանը» ու հետո քահ-քահ ծիծաղում էր: Երբ խնդրեցի բացատրել պատճառը, նա ուրախ ժպիտով սրամտեց, թե դա քեռու՝ աշուղ Խըրթըզի երգն է, որն անընդհատ ձգտում էր հետ չմնալ քաղաքի մեծամեծ երգիչներից: Նա մի երկու եղանակ գիտեր և իր բոլոր հորինած երգերը դրանցով կերգեր»:[7]

Ինչ խոսք, ընտանեկան մթնոլորտը և այդ ժամանակաշրջանի Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթը չէին կարող ազդեցություն չունենալ ապագա երգչի ճաշակի ձևավորման վրա: Նա փոքր հասակից սկսում է երգել, նաև նվագել սազ ու չոնգուր, ապա՝ ճիանուր (քամանչա), որն էլ հետագայում դառնում է նրա մշտական ուղեկիցը: Բնատուր գեղեցիկ ձայնը, նրբաճաշակ կատարումները հիացնում էին մտերիմներին ու հարազատներին: Ծնողները ուշադիր էին և ուզում էին, որ իրենց տղան ուսյալ մարդ դառնա: Յոթ տարեկանից նա սկսում է գրագիտություն սովորել Ալեքսանդրապոլում մեծ համարում ունեցող Սարի դպրոցում:[8] Ուշիմ տղան այստեղ էլ աչքի էր ընկնում իր վառ ընդունակություններով: Տասը տարեկան էր, երբ մահացավ հայրը: Ընտանիքը զրկվեց ապրուստի միջոցից: Վիճակը ավելի ծանրացավ, երբ 1918, 1920թթ. թուրքերը ներխուժեցին Ալեքսանդրապոլ: Երեք որբերի ձեռքը բռնած՝ Հայաստան Մարտիրոսյանը գաղթում է Ղարաքիլիսա (Վանաձոր), այնուհետև՝ Թիֆլիս: Փոքրիկ Գեղամի համար միակ մխիթարանքը հորից հիշատակ մնացած սազն էր, որն ամուր գրկած՝ նա տեղից տեղ էր գնում: Ծանր վիճակում հայտնված ընտանիքը այլևս չէր կարող իրեն թույլ տալ մտածել երեխաների կրթության մասին: Եվ Գեղամը հայտնվում է կոշկակարի արհեստանոցում, մորեղբոր մոտ որպես աշկերտ: Որքան էլ դառն էր իրականությու-

---

[6] ***Իգիթ,*** Իմ կյանքի հուշերը, Ինքնակենսագրական, հուշագրություն (ձեռագիր), «Կումայրի» արգելոց-թանգարան, Իգիթի ֆոնդ, թ.1, էջ 3:

[7] Նույն տեղում, էջ 5:

[8] Սարի ուսումնարան, Ալեքսանդրապոլում արական 4-դասյա դպրոց, հիմնադրվել է 19-րդ դ. վերջերին:

նը, այնուամենայնիվ Գեղամը երազում էր երգել, ծանոթանալ ժամանակի մեծամեծ աշուղների հետ: Հուշերում կարդում ենք. «Մի անգամ փողոցում հանդիպեցի ուստա Գոքորին՝ Շերամին: Չհամարձակվեցի խոսել հետը, բայց լուռ հմայվածի պես հետևեցի նրան: Թիֆլիսի մի փոքրիկ ճաշարանում, որտեղ ելույթներ էր ունենում Շերամը, գտա նրան: Կանգնեցի դռան հետևում ու ջուրը տեսած ծարավի պես լսում էի նրա անուշ ձայնը: Շերամի երգերը մտնում էին սիրտս ու ինձ համար դառնում միտք ու հոգի»:[9] Հետագայում նա իր հանդիպման ու Շերամից դասեր առնելու մասին պատմում էր մեծ հիացմունքով և ակնածանքով: Մի հրապուրանք ևս կար, Գեղամին ձգում էր թատրոնը: 1929թ. նա դառնում է Թիֆլիսի Արհեստավորաց ակումբի թատերական խմբակի մասնակից: Նույն տարին, որպես սկսնակ դերասանի՝ նրան հրավիրում են Թիֆլիսի Հայկական սատիրայի թատրոն: Թեև դերերը փոքր էին, այնուամենայնիվ հմայիչ արտաքինով պատանին գրավում է հանդիսատեսին իր ազդու գեղեցիկ ձայնով ու դերասանական խաղով: Այստեղ է, որ նրան նկատում է դեռևս երիտասարդ, ավյունով լեցուն, եռանդուն Վ.Աճեմյանը, որն առաջարկում է Գեղամին աշխատել Լենինականի դրամատիկական թատրոնում: 1930թ. Գեղամ Մարտիրոսյանը վերադառնում է հայրենի քաղաք և ապրում այստեղ մինչև կյանքի վերջը:

Աշխատանքը թատրոնում Գեղամին ոգեշնչման նոր թեմաներ տվեց: Ընդհանրապես, թատրոնում աշխատակիցների մեծ մասը երիտասարդ սկսնակ ստեղծագործողներ էին, որոնք տոգորված էին սովետական թատերական նոր արվեստ ստեղծելու վեհ ու ազնիվ գաղափարներով: Օրվա կիզող խնդիրներն էին նոր կյանքի հաստատման թեմաները: Այս ամենով ոգևորված Գեղամ Մարտիրոսյանը սկսում է գրել պիեսներ թատրոնի համար («Վերածնվող պատանի» (1933), «Սայաթ-Նովա» (1935), «Վաղեմի ընկերներ» (1936) և այլն): Լենինականի թատրոնի բեմում նրա խաղընկերներն էին Ցոլակ Ամերիկյանը, Լևոն Զոհրաբյանը, Արուս Ասրյանը, Անահիտ Մկրտումյանը, Ժաննա Զոհրաբյանը, Գեղամ Հարությունյանը, Արծրունի Հարությունյանը, որոնք քաջալերում էին սկսնակ դերասանին: Հատկապես ոգևորիչ էին ներկայացումների այն դրվագները, որտեղ Գեղամը երգում էր իր գեղեցիկ բարիտոնով:

[9] «Բանվոր», 1977, 1 ապրիլի:

Դերասան Գեղամ Մարտիրոսյանի մասին նրա երկարամյա խաղընկերուհին՝ ՀԽՍՀ վաստակավոր արտիստուհի Նինա Բոխյանը, ջերմորեն է արտահայտվել. «Իր մարդամոտ, բարի ու անքեն բնավորությամբ նա վայելում էր կոլեկտիվի հարգանքն ու սերը: Որպես դերասան՝ իր խառնվածքով առանձնանում էր մյուսներից: Ինչ դեր էլ որ խաղար, տպավորիչ էր, հյութեղ և, որ կարևորն է, ամեն մի դերի համար կարողանում էր գտնել բնորոշ գույներ, որոնք ավելի տիպական էին դարձնում նրա անձնավորած բեմական կերպարները»:[10]

Թատրոնում աշխատելու տարիներին Գեղամը շարունակում է երգել և երբեմն մասնակցել սիրողներից կազմված աշուղական անսամբլ-ների համերգներին:

1935թ. Գեղամ Մարտիրոսյանին հրավիրում են Լենինականի Կառուցողների ակումբ, որպես թատերական խմբակի ղեկավարի: Նույն ակումբում իր իսկ ջանքերով ստեղծում է գուսանական երգի անսամբլ, որի հետ պարբերաբար ելույթներ է ունենում Լենինականում, Երևանում, Կիրովականում և այլուր: Առաջին համերգների երգացանկում ընդգրկված էին Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի և ուրիշ նշանավոր աշուղների երգեր: Անսամբլի կազմում էին քաղաքի երևելի գործիքահար երաժիշտներ և երգիչներ՝ Ց.Քյոսաբաբյանը (թառ), Խ.Զատիկյանը (քամանչա), Մ.Ղոջյանը (դափ, դհոլ, նաղարա), Ծ.Ղազարյանը (մեներգ), Գ.Մարտիրոսյանը (մեներգ, քամանչա) և ուրիշներ: Այս տարիներին էլ նա ստանում է իր աշուղական անունը՝ ***ԻԳԻԹ***: Հուշերում այս մասին գրում է. «Անսամբլում էր երգչուհի Ծովիկ Ղազարյանը: Մի օր նա ուսիս խփեց ու ասաց. «Ապրես, Գեղա՛մ ջան, ապրե՛ս, ամեն բան ձեռքիցդ գալիս է: Իգի՛թ ես, Իգի՛թ»: Եվ ես, երեք տարի շարունակ Ծ.Ղազարյանի քաջալերող խոսքը հիշելով, երգերս Իգիթով էի ավարտում՝ ըստ գուսա-նական-աշուղական ավանդույթի: Որոշ ժամանակ անց, մի օր Ծ.Ղազարյանը, մոռանալով իր պարգևած կեղծանունը, ինձ հարցրեց, թե ով է այդ գուսան Իգիթը, ինքը շատ գուսանների գիտեր, բայց այդ անունը ոչ մի տեղ չէր հանդիպել: Ես էլ պատասխանեցի, որ Իգիթը ծեր մարդ է,

[10] «Բանվոր», 1984, 11 նոյեմբերի:

մտածելով՝ եթե ճշմարտությունն իմանան, պիտի ծիծաղեն վրաս»:[11] Այդ օրվանից Գեղամ Մարտիրոսյանը օծվեց որպես Իգիթ:

Թատրոնում աշխատելու տարիներին Իգիթը գրում է մի շարք բանաստեղծություններ ու երգեր: Երկար ժամանակ արտիստը երկընտրանքի առաջ էր՝ թատրո՞ն, թե՞ համերգային բեմ: Ի վերջո ստեղծագործողերգիչը հաղթում է դերասանին: 1945թ. մայիսի 1-ը Գեղամի համար վերջին ներկայացման օրն էր, այնուհետև Իգիթը իրեն լիովին նվիրում է ստեղծագործելուն և համերգային գործունեությանը:

Պատերազմի օրերին իր անսամբլով երգիչ-բանաստեղծը հաճախ էր շրջում զորամասերում և իր հայրենաշունչ երգերով «Հաղթանակի օր», «Հայրենիքիս» և այլն՝ ոգևորում զինվորներին:

1938թ. Իգիթի ղեկավարած գուսանական անսամբլը մասնակցում է Արվեստի հանրապետական օլիմպիադային ու պարգևատրվում դիպլոմով: Ժողովուրդը, լսելով նրա երգերը, փոխանցում էր բերնեբերան, տարածում և երբեմն էլ սեփականելով՝ վերարտադրում դրանք իբրև ժողովրդական: Տարեկան 10-12 համերգ Հայաստանի տարբեր քաղաքներում, որի արդյունքում՝ Իգիթի ղեկավարած անսամբլը բազմիցս պարգևատրվում է պատվոգրերով, դիպլոմներով:

1945թ. մարտին Հանրապետական օլիմպիադայում կրկնակի առաջնություն շահելուց հետո Արվեստի գործերի վարչության որոշմամբ գուսան Իգիթի ղեկավարած անսամբլը ստանում է «Ժողովրդական»-ի կոչում և որպես պետական կոլեկտիվ ընդգրկվում Հայֆիլհարմոնիայի Լենինականի մասնաճյուղի կազմ: Հարկ է նկատել, որ աշուղի երաժշտական-հասարակական գործունեությունը հարթ ճանապարհով չի ընթացել: Երբեմն անհայտ պատճառներով նույն ֆիլհարմոնիայի տնօրինության կարգադրությամբ անսամբլը ցրել են կամ կազմը փոքրացրել: Պատահել է, որ անգամ արգելել են համերգներ տալ: Ինչ խոսք, սա առաջ էր բերում մեծ հիասթափություն: Շնորհալի երաժիշտները հեռանում էին անսամբլից և հաճախ իրենց ճանապարհը փորձում հարթել Երևանում: Ստեղծագործությունների տպագրության հարցն էլ անբացատրելի պատճառով ձգձգվում էր: Մեր ձեռքի տակ է մի փաստ. «Գուսանի մուսան» գրքի հրատարակման համար 1985թ. կայացվել է որոշում՝ շտապ տպա-

[11] ***Իգիթ***, նշվ. աշխ., էջ 34:

գրել վերոհիշյալ երգերի ժողովածուն (170 երգ), որի համար նրանից պահանջվել է երկու լուսանկար, լրացուցիչ մի շարք փաստաթղթեր: Հետո՝ 1991թվականին, «Անահիտ» հրատարակչության տնօրեն Արտակ Ոսկանյանի գրավոր կարգադրությամբ որոշվում է խմբագրական աշխատանք սկսել փետրվարի երեքից և ժողովածուն լույս ընծայել մեկ տարվա ընթացքում: Աշխատանքը ձգձգվում է մի քանի տարի և միայն Իգիթի պահանջով ձեռագիրը վերադարձվում է հեղինակին:

Հայ երաժշտարվեստի անխոնջ մշակը կարողանում էր մեծ ճիգերի գնով հաղթահարել ժամանակի դժվարությունները, իր շուրջը կրկին հավաքելով շնորհալի երիտասարդ նվագածուներ ու երգիչներ՝ վերականգնում էր անսամբլը՝ շարունակելով համերգային գործունեությունը:

1976թ. թիվ 1 մշակույթի տան գուսանական անսամբլի ղեկավար աշուղ Իգիթը պարգևատրվում է Հանրապետական մրցույթի երրորդ կարգի դիպլոմով, իսկ անսամբլին շնորհվում է «Ժողովրդական»-ի կոչում: Իգիթը ազգային արվեստի նվիրյալ գործիչ էր, որի համերգները աչքի էին ընկնում հեղինակների բազմազանությամբ: Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի կողքին նա մեծ պատրաստակամությամբ հնչեցնում էր նաև նորահայտ աշուղների՝ Հրկեզի, Աշխույժի, Համազասպի հորինումները: Հատկապես ուշադրություն էր դարձնում հայ երգով տարված երիտասարդներին, հորդորում նրանց սովորել և շարունակել ուսումը: Մի իրողություն, որ այդպես էլ իրեն չհաջողվեց կյանքում:

Գիտելիքների պակասը երգիչ-բանաստեղծը ողջ կյանքի ընթացքում լրացրել է ինքնակրթությամբ: Միշտ հետաքրքրվել է գրականությամբ, պոեզիայով, ինչի վկայությունը նրա երգերի հղկված, գեղեցիկ ու պատկերավոր բանաստեղծական լեզուն է:

1957թ. աշուղ Իգիթի կյանքի ու գործի անբաժան ուղեկիցը դարձավ շնորհաշատ երգչուհի Թամարա Մկրտչյանը, որ նաև նրա շատ երգերի առաջին կատարողն էր:

Թ. Մկրտչյանը ծնվել է 1936թ. Լենինականում՝ արհեստավորի ընտանիքում: Դեռևս մանուկ հասակից, իր յուրահատուկ արտահայտիչ ձայնի շնորհիվ, կատարել է ժողովրդական և աշուղական երգեր: Պատանեկան տարիներից հանդես է եկել Լենինականի Լուսաշխ-ի, Տեքստիլ կոմբինատի և այլ մշակույթի տներում որպես մենակատարուհի:

Մինչև 1988թ. երգչուհին մշտապես մասնակցել է Իգիթի աշուղական խմբի բոլոր համերգներին: Երբեմն էլ նա դարձել է աշուղի որոշ երգերի համահեղինակը, հիշատակենք՝ «Ինչքան սիրեցի», «Ուր էլ գնամ», «Նռան գինի» և այլ երգերը:

Երգչուհին փայլուն տիրապետել է Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի երգային-կատարողական արվեստի ոճական առանձնահատկություններին:

Աշուղ Իգիթն իր երաժշտական-հասարակական գործունեության ընթացքում մի շարք հետաքրքիր հանդիպումներ է ունեցել հայ մտավորականների, արվեստագետների ու նշանավոր գործիչների հետ: «Փոքրիկ մարմնի մեջ՝ մեծ տիտան». այդպես էր բնութագրում Վ. Աճեմյանին, որի հանդեպ ունեցած հիացմունքը երբեք չէր թաքցնում: Հայ երգի մեծ պատվիրակ էր համարում երգիչ Վաղարշակ Սահակյանին: Վերջինս էլ իր հերթին էր դրվատանքի խոսքեր ուղղում շնորհաշատ երգիչ-բանաստեղծին ու նրա երգերը հնչեցնում իր ղեկավարած անսամբլի համերգների ժամանակ:

Խոր ակնածանք էր տածում իր գրչակից ընկերների՝ Հավասու, Շահենի, Աշոտի հանդեպ: Հուշերում նա շնորհակալությամբ էր հիշում կոմպոզիտոր Ազատ Շիշյանին, որն առաջինը ձեռնամուխ եղավ իր երգերի ձայնագրման ու նոտագրման գործին: Նրանց համատեղ աշխատանքի արդյունքը «Շիրակն իմ մուսան» ժողովածուն էր, որ լույս տեսավ 1968 թվականին:

Աշուղ Իգիթն աշխարհընկալման նուրբ զգացողություն ուներ: Ոչ մեծ իրադարձությունները, ո՛չ էլ առօրյա կյանքում պատահող որևէ մանրամասն նրա աչքից չէին վրիպում, և հաճախ դրանք դառնում էին ստեղծագործության նյութ: Մինչև խոր ծերություն աշուղ Իգիթն ապրեց հայրենի քաղաքում և երբևէ հաջողության ու երջանկության, ճանաչման ափեր չփորձեց փնտրել այլ քաղաքներում:

Հավատարիմ իր արմատներին՝ նա մահկանացուն կնքեց 1996թ. Գյումրիում՝ ժառանգություն թողնելով իր հուզավառ երգերն ու գրական ստեղծագործությունները:

Աշուղ Իգիթի երգերի բովանդակությունը

Աշուղ Իգիթը թողել է գրական ու երաժշտական ստվար ժառանգություն, որից հրատարակվել է միայն երգերի մի փոքրիկ ժողովածու: Գրական ստեղծագործությունների ցանկում կարելի է հանդիպել թատերական պիեսներ, դրամաներ, կատակերգություններ, երգախառն պատմություններ ու հեքիաթներ, պոեմներ, օպերետներ, վոդևիլներ, երգախառն ինքնակենսագրական հուշապատումներ:

Գրական ստեղծագործությունները աշուղի հույզերի, մտորումների ու զգացմունքների արտացոլումն են:

Գեղարվեստական արժեքավորման խնդիրը թողնելով գրականագետներին՝ այնուամենայնիվ, նշենք, որ սրանք կարող են հետաքրքրություն ներկայացնել իբրև տվյալ ժամանակաշրջանին հատուկ ինքնատիպ մտածողության և ստեղծագործողի անհատական հայեցակետի դրսևորումներ: Մեր կարծիքով, առավել հաջողված են «Ինչպես ստեղծեցի երգ», երգախառն ինքնակենսագրական, «Սազանդարի որդի», «Աշուղ Շերամ» գրվածքները:

Առավել հետաքրքրող բաժինը երգային ստեղծագործությունն է, որն աշուղի ժառանգության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում: Այս տեսակետից հասարակության ուշադրությանը ներկայացված բանաստեղծությունների ու երգերի հրատարակված քանակը առավել քան համեստ է:

Աշուղ Իգիթի երգերի բանաստեղծական խոսքն աչքի է ընկնում հուզականությամբ, արտահայտչական ներկապնակի բազմերանգությամբ: Հայրենիք և սեր, գովասանություն և խրատ, կարոտ ու բողոք. սրանք են բովանդակային այն շերտերը, որոնց անդրադառնում է աշուղը: Իր ասելիքի մեջ նա անկեղծ է. չի թաքցնում զգացմունքները, տրտմությունն ու ցավը, խանդավառ հիացմունքն ու հուսահատ հիասթափությունը: Հաճախ իր երգվող չափածո գրվածքներում, նա երկխոսության մեջ է մտնում աշխարհի ու բնության հետ, հավատում է ճակատագրին, երբեմն էլ ընդվզում նրա դեմ: Իգիթի երգերում գերակշռողը քնարական հուզազգացողությունն է: Սակայն մտերմիկ միջավայրը երբեմն վերած-

վում է հասարակական մեծ լարանի, որտեղ աշուղը պատմում է ժողովրդին հուզող ցավերի մասին, հայտնում իր բողոքը կյանքի անարդարությունների դեմ: Այդուամենայնիվ, քննադատական հրապարակախոսությունը չէ երգչի տարերքը: Նա լուսավոր կյանքի, վառ ապագայի, ազնիվ աշխատանքի քարոզիչ է, փոխադարձ սիրո ջերմ զգացմունքների ջատագով:

Աշուղի բանաստեղծական խոսքում առանձնահատուկ շեշտադրություն ունի հայրենիքի գովերգման թեման, որում մեկտեղվում են հայրենի երկիր Հայաստան, հայրենի քաղաք, ծննդավայր հասկացությունները, անգամ Հայաստանի քարը կամ ծաղիկը երգչի համար կարող է դառնալ բանաստեղծական ոգեշնչման ազդակ: Ինչպես իրավացիորեն նշում է Միքայել Հարությունյանը՝ «Հայրենասիրությունը գուսանի սազի առաջին լարն է»:[12] Իր երգերում աշուղը գովերգում է «ազատ ու անկախ», «զորեղ ու աներեր առաջ շարժվող», «բարգավաճ հեռանկարներ տեսնող» հզոր հայրենիք: Իբրև անթաքույց սիրո վառ արտահայտություն՝ նա ազատ ու համարձակ էլ փառաբանում է իր հայրենի երկիրը.

Ես սիրում եմ հայրենիքս, անմահական բույրին մատաղ,
Ամենուրեք խինդ ու ծիծաղ, քաղցրալի աղբյուրին մատաղ,
Ինչպես նորաբաց վարդենին, ալ թերթերն է չորս կողմ փռել,
Կարմիր գինով արբեցնող թանկագին նեկտարին մատաղ:

(ՇԻՄ, էջ 13)[13]

Ծննդավայրը, որի ճամփան ավերի ու եղեռնի միջով է անցել, այսօր «սիրտն իբրև ազատության դրոշ պարզած», «գեղաշուք, վեհաշուք արևի» տեսք է ստացել: Երգիչը մեծ ոգևորությամբ ու նվիրումով «օրն ի բուն» տաղ է ձոնում իր «ոստան հայոց Լենինականին»՝ համարելով նրան «հարազատ մայր», և հարկ եղած դեպքում էլ պատրաստ է հանուն նրան կյանքը զոհաբերել.

Ինձ ասում են՝ գուսա՛ն Իգիթ, այս քաղաքը շատ ես սիրում,
Եվ օրն ի բուն լցված սիրով նրա մասին երգ ես գրում,
Ով չի սիրում իրեն մորը ու իր կյանքը նվեր բերում,
Իմ օրորո՛ց, ոստա՛ն հայոց՝ լույս գալիքով, Լենինակա՛ն:

(ՇԻՄ, էջ 22)

---

[12] Աշուղ Իգիթ, «Շիրակն իմ մուսան», Եր., 1968, էջ 4 (այսուհետև՝ ՇԻՄ):
[13] ՇԻՄ, էջ 13: Այն երգերը, որոնք չունեն ՇԻՄ նշումը, անտիպ են:

Հայրենիքի բարգավաճման առհավատչյան անխախտ խաղաղությունն է, և պատերազմ սանձազերծող մութ ու խավար ուժերը միմիայն նզովքի են արժանանում: Նա միանում է միլիոններին, իր գիրը դնում դիմումի տակ, պատրաստ է կյանքը զոհելու հանուն հայրենիքի, սիրտն էլ հանելու և նվեր բերելու մարդկությանը՝ որպես խաղաղության անխախտ գրավական.

Ովքեր կուզեն նոր պատերազմ, անեծք թափվի նրանց գլխին,
Ով մոլուցքով է նայում դեղին ոսկուն ու դոլարին,
Հազար անեծք հրձիգներին, պատերազմ բորբոքողներին,
Իգի՛թ, նզովի՛ր անդադար, բերեք գրեմ դիմումիս տակ:

(ՇԻՄ, էջ 24)

Աշուղ Իգիթը նոր ու նորացած հայրենիք փառաբանող երգիչ է, անուշաբույր ծառ ու ծաղկի եդեմական բույրով արբած իր քնարի լույս տաղերով է գովերգում հազար գույնով հուրհրացող Հայաստանի նոր ու սիրուն քաղաքները.

Դարձել ես դու լույսի քաղաք,
Հայոց երկրի փառք ու պարծանք,
Քո վերելքով միշտ կխնդանք,
Եվ քո սիրով, իմ Երևա՛ն: (ՇԻՄ, էջ 29)

Նրա երգերի հերոսները նոր ժամանակների մարդիկ են, կոլխոզնիկներ, հերոսական գործ անող բանվոր տղերք, մեղվի նման ժիր աշխատող հայ պատանիներ ու գեղանի աղջիկներ.

Իգի՛թ, սազդ լարիր դաշտում,
Գովի՛ր որքան սիրտդ է ուզում,
Մեղվի նման են աշխատում
Հայաստանի աղջիկները:

Ազատ միտքն ու անկախ հայրենիք գովերգող երգիչն իր ազգի որդիների՝ Անդրանիկի, Դրոյի փառքը պանծացող բանաստեղծ է.

Քեզ չեմ տեսել, բայց համբավդ եմ լսել,
Հայոց ազգի քաջ զորավա՛ր Անդրանիկ,
Թրիդ ահից թշնամիք են սարսափել,
Հայոց ազգի քաջ զորավա՛ր Անդրանիկ: («Անդրանիկ»)

Հոգու հրճվանք կա Վիկտոր Համբարձումյանին, մարշալ Հովհաննես Բաղրամյանին նվիրված երգերում: Անհուն կարոտի հույզերով է համակված Ավ. Իսահակյանին նվիրված երգը.

Ալագյազի զմրո՛ւխտ հավքեր,
Ձա՛յն տվեք, թող Վարպետս գա,
Սրտիս խորքում վառ հույս ունեմ,
Կարոտս առնեմ, Վարպետս գա: («Վարպետս գա»)

Իգիթն աշուղի կոչմանը հավատարիմ երգիչ է: Նրա համար բնութագրական են Գարեգին Լևոնյանի հետևյալ տողերը. «Նոցա /աշուղների–Հ.Ա./ երգերի նյութը դառնում է ժողովրդի կյանքի ժամանակակից պատկերը: Աշուղներն արտահայտում են նոր մտքեր և հայտնում իրենց սեփական գաղափարներն իբրև քարոզ և աշխատում են տարածել ժողովրդի մեջ, այդպիսով, աշուղն իբրև մի նվիրական անձ է ժողովրդի աչքում, իբրև վսեմի և գեղեցիկի կատարելատիպը պատկերացնողը»:[14]

Իգիթը Սայաթ-Նովայի ու Ջիվանու գործի շարունակողն է: Նա և հրապարակախոս է և գովասան: Իր ժողովրդի կամքին հավատարիմ երգիչ ու բանաստեղծ է, նրա սրտի ցավի թարգմանն է, ազգի ծառան, վառ ապագայի գովերգողը.

Քո որդին եմ, քո երգիչը, օր ու գիշեր երգ եմ ասում,
Քո ներկայի, ապագայի արևաշող գովքն եմ ասում …

(ՇԻՄ, էջ 22)

Աշուղ Իգիթի պատվարը «երգի արքա», «տաղ սիրող լուսավորիչ» Սայաթ-Նովան է: Հիացմունքով ու գործին հետևելու պատվախնդրությամբ է գովերգում աշուղն իրեն «լար ու ոսկի քնար, մտքի թռիչք տվող» հայոց երգ ու բառի վարպետին՝ «խալխի նոքար» Սայաթ-Նովային: Իբրև նրա մեծ գործի ազնիվ հետևորդ էլ «ժողովրդի ծոցից ելած գուսանը» քաղցրադայլայլ սոխակ դարձած երգ է ասում անվախորեն, ճշմարիտ խոսքով.

Սազը ձեռքին գիշեր-ցերեկ պիտ երգի
Ժողովրդի ծոցից ելած գուսանը,
Իր երգերով գյուղ ու քաղաք ողողի,
Քաղցրադայլայլ սոխակ դարձած գուսանը: (ՇԻՄ, էջ 17)

---

[14] ***Գ.Լևոնյան***, Երկեր, Եր., 1963, էջ 25:

Եվ այլ կերպ էլ չէր կարող լինել: Դեռևս աչքը նոր բացած, մռայլ ու թախծալի աշխարհի մասին ապագա աշուղը առաջին տպավորությունը ստացել էր հոր երգի ջերմ հնչյունների ներքո: «Քաղաքի սիրված սազանդար»-ի՝ չալղրչի Մարտիրոսի ջութակը ձեռքն առած շնորհալի պատանին հոր պես շարունակում է երգել հայրենիքի ու սիրո մասին.

Ու ես էլ ժառանգորդ, հորս հիշատակ,
Լարեցի ջութակս, ձայնս անհատակ,
Վարդը արեցի սեր, ես դարձա սոխակ,
Նոր կյանքի ստեղծագործ օրերը տեսա: (ՇԻՄ, էջ 31)

Հուզառատ զգացմունքների արտահայտություն է «Հայրիկ» երգը, որում հայրը զավակների համար ոչ միայն հովանի է ու պահապան, այլ նաև բարի խոսքի խրատատու, ազնվության ու պատվասիրության չափանիշ.

Բարի ձեռքդ գլխներիս
Հովանի է միշտ մեզ, հայրի՛կ,
Աճեցնում, մեծացնում,
Տաք արև ես տալիս, հայրի՛կ: (ՇԻՄ, էջ 25)

Գրեթե նույն ոգով է հորինված նաև «Մայրիկ» երգը:

Աշուղի համար «ծիածանից բարձր», «բույրասփյուռ գարուն» մայրը իր որդու դեմ վայող ոսոխին տեսնելիս կերպարանափոխվում է, դառնում դիպուկ զենք, զրահակիր պատնեշ.

Ծնված ժամից մինչև այսօր,
Ինձ հսկում ես ինչպես զինվոր,
Չես թողնում մազս կորչի զուր,
Դիպուկ զենք ես, շողո՛ւն մայրիկ: (ՇԻՄ, էջ 38)

Մեկ երգի մեջ նույն կերպարի հակադիր բնութագրությունները աշուղի գեղարվեստական հարուստ մտածողության արտահայտությունն են անշուշտ և միևնույն ժամանակ ցույց են տալիս իր զավակին նվիրված մոր բնավորության ներքին ուժն ու կերպարանափոխվելու զորեղ ընդունակությունը.

Պարտիզպանն իր սիրած այգում,
Ծաղկանց այնքան չի փայփայում,
Որքան դու ես ինձ գուրգուրում,
Ծիլերս աճեցնում, մայրի՛կ:

Երբ ոսոխն է դեմս վայում,
Թևդ իսկույն վրաս ես պահում,
Իգիթ աչքերով ես նայում,
Զրահակիր, կանգո՛ւն մայրիկ:

(ՇԻՄ, էջ 39)

Ի տարբերություն «Թոռնիկ» երգի, որը ժողովրդական մանկախաղաց, երեխա թոցնելու երգի նմանողությամբ է հորինված, այդ երգերին հատուկ բառապաշարի ընտրությամբ («անուշ», «փնփուշ», «թութուշ», «թոթոլ» և այլն), «Որդյակ»-ը ներանձնային ապրումներով հարուստ քնարական, թախիծով լեցուն մենախոսություն է.

Ամեն անգամ աչքիս առաջ է գալիս,
Արեգնային լույս պատկերդ, որդյա՛կս,
Սիրտս ներսից մաղիկ-մաղիկ է լալիս,
Գետի նման արցունք թափում, որդյա՛կս: (ՇԻՄ, էջ 40)

Թերևս «Որդյակ» երգի միանգամայն տրամաբանական շարունակությունը կարելի է համարել «Բարև տարեք»-ը /ՇԻՄ, էջ 27/: Հուսահատության մեջ ընկած հայրը վիշտը թեթևացնելու համար դիմում է երկնքի կապույտում չվող թռչուններին, վերևում ճախրող բազեներին, որ որդյակին «իր սրտի խորքերից» բարև ու բորբ արև տանեն, «իր աչքերից հորդուն անձրև տանեն» ու ասեն, որ Իգիթը թոշնել է կարոտից, լեզուն չորացել է այրվող տապակից, բայց նա երբեք ու երբեք էլ չի մոռացել իր որդուն.

Պատմեք, որ հայրը որդուն չի մոռանում,
Զոր չի հանգստանում, գիշեր չի քնում,
Օրեր են անցնում, մտածում է, տանջվում,
Հոգուս պարտեզից կանաչ տերև տարեք: (ՇԻՄ, էջ 27)

Առանձին երգերում նկատվում են հոգեկան խռովք ու ներքին երկվություն:

Տխուր մտորումներից, կարոտից թևաթափ աշուղը դեռևս հույս է փայփայում, որ աշխարհից ու իրենից խռոված եղբայրը մի օր տուն դառնա: Աշուղի խոսքերով «եղբայրը անփոխարինելի սիրած ընկեր է», «նեղ օրերի սատար», առանց որի նա միայնակ է ու դարդից ծերացած, ցավով է կարեկցում ու կանչում նրան.

-Յարաբ ո՞ւր ես, արի՛ տեսնեմ:

Իգիթի արտաքուստ զուսպ բանաստեղծական աշխարհը առատ է թախիծով, հուզական նրբերանգներով: Փոխաբերությունները, գեղեցիկ համեմատությունները (արեգնային լույս պատկեր, խռով սիրտ, արցունք աչքեր) ասելիքը դարձնում են առավել գունեղ ու արտահայտիչ: Այլաբանությունը, որ այնքան էլ բնորոշ չէ երգչի բանաստեղծական մտածողու-

թյանը, բովանդակության ենթատեքստում միմյանց հակադրվող զգացմունքային բախումների պատկերավոր հայեցողական տրամադրությունների ստեղծման դրսևորում են:

Իգիթը որոշ չափով հետևում է աշուղական երգարվեստում ընդունված թե՛ թեմատիկ և թե՛ հորինվածքային ավանդական ձևերին: Հայտնի է, որ հնում, աշուղական երգարվեստում ասելիքի կարևոր կողմը հատկապես խոսքն էր, և երգիչը իր հորինած երգերի համար օգտագործում էր ավանդական աշուղական եղանակներ: Իգիթի ստեղծագործություններում խոսքն ու երգը մեկ միասնություն են, և ամեն մեկն ինքնուրույն գիծ ունի:

Երգային ժառանգության մեջ հազվագյուտ, բայց հանդիպում են նաև տեքստային փոխառության երևույթներ: Նման օրինակ է ժողովածուի «Նորապսակ հարսն ու փեսան» ծիսական երգի տեքստը, որ առանձին տարբերություններով փաստորեն աշուղ Փիր-Ղալամի «Հարս ու փեսի գովեստը» երգի նմանողությունն է.

Փիր-Ղալամ	*Իգիթ*
Բարով մուրազներին հասնին,	*Եկեք գովենք սազով, դամով*
Գովեմ հարսն ու նորափեսեն,	*Նորապսակ հարսն ու փեսան,*
Ծլին, ծաղկին, աշխարհ լցնին,	*Փափագներին հասնեն բարով,*
Գովեմ հարսն ու նորափեսեն:	*Նորապսակ հարսն ու փեսան:*
Նորահարսը՝ դամար լուսնյակ,	*Նորահարսը զմրուխտ քար է,*
Աչքերը՝ փառ-փառ արեգակ,	*Նորափեսեն անգին յար է,*
Բոյը՝ սուջա, բարձր ու բարակ,	*Սրտով-հոգով խիստ հարմար է,*
Գովեմ հարսն ու նորափեսեն:	*Նորապսակ հարսն ու փեսան:*
Նորափեսեն՝ լման բարդի,	*Նորափեսեն՝ ուսումնական,*
Գլխին դրած կալաբարդի,	*Անուն ունի շատ պատվական,*
Բացված քյանց մայիսվա վարդի,	*Ծնողին հարգող գովական,*
Գովեմ հարսն ու նորափեսեն:	*Նորապսակ հարսն ու փեսան:*
Նորահարսը մի հրեղեն,	*Խաչեղբայրը սալբու չինար,*
Ջամալը ճերմակ լուսեղեն,	*Ունքերը կեռ ինչպես կամար,*
Հանց արեգակ ծագի տեղեն,	*Մեջքին կապած կաշվե քամար,*
Գովեմ հարսն ու նորափեսեն:	*Նորապսակ հարսն ու փեսան:*

Նորափեսեն ուսյալ գիտակ,
Ամեն սունաֆի ընդունակ,
Ծնողաց խոնարհ զավակ,
Գովեմ հարսն ու նորափեսեն:

Նորահարսը անգին քար է,
Հար կողմով թամամ թայար է,
Դուռ ջավահիր ու գոհար է,
Գովեմ հարսն ու նորափեսեն:

Փիր-Ղալամ ելավ քավոր,
Դառնան թագուհի, թագավոր,
Աստված անի շնորհավոր,
Գովեմ հարսն ու նորափեսեն:

Խնամիներին խոսք չկա,
Լավ մարդիկ են, երկինք վկա,
Մեկը մյուսին կյանք կտա,
Նորապսակ հարսն ու փեսան:

Ազապբաշին ինչպես կրակ,
Իսկական ամռան արեգակ,
Բեխը ծիլ-ծիլ, տոճի հասակ,
Նորապսակ հարսն ու փեսան:

Թամադան անվանի մարդ է,
Խրախճանքի անգին զարդ է,
Շեն պարտեզի կարմիր վարդ է,
Նորապսակ հարսն ու փեսան:

Իգի՛թ, ապրեն ծնողները,
Քո մասին մտածողները,
Աշուղ, երգերդ տարածողները,
Նորապսակ հարսն ու փեսան:

(ՇԻՄ, էջ 69)

Փիր-Ղալամի երգի եղանակը ոչ մի տպագիր ժողովածուում մեզ չի հանդիպել, իսկ Իգիթի ներկայացրած մեղեդային տարբերակում պարզորոշ դիտարկվում են ավանդական եղանակներին հատուկ կաղապարային որոշ առանձնահատկություններ:

Անշուշտ, սա աշուղական երգարվեստում միակ օրինակը չէ և վկայում է աշուղական երգչական գործունեության մեջ հաճախակի կիրառվող ոչ միայն մեղեդային, այլև խոսքային կաղապարների փոխառման ու գործառության մասին:

Իգիթի ժառանգության մեջ հանդիպում են նաև նմուշներ՝ հորինված ժողովրդական երգային ժանրերի նմանողությամբ, օրինակ, վերևում արդեն վկայաբերված «Թոռնիկ»-ը, «Զարթի՛ր, անո՛ւշ կինս» և ուրիշ երգեր: Վերջինս առավելապես մոտ է ողբերգերին, ավելի ճիշտ՝ լացերին: Երգի գաղափարական բովանդակությունը հեռավոր առնչություն ունի Պաղտասար Դպիրի միջնադարյան «Ի ննջմանէդ արքայական» երգի

հետ:[15] Այս երկուսը տարբերվում են միմյանցից թե՛ բովանդակությամբ, թե՛ տաղաչափությամբ և թե՛ մեղեդիով: Միավորողը հայ ժողովրդական երգարվեստում հայտնի «ոգեկոչման» երգատեսակն է, որը, մեր համոզմամբ, հանահունչ է արթնացումի երգերին:[16] Նույն երգատեսակի օրինակներ են Կոմիտասի «Ե՛լ, ե՛լ»-ը, «Հո՛լ արա, եզո՛»-ն, «Զարթի՛ր, լա՛ռ»-ն և այլն: Հետագայում այս երգատեսակը ժողովրդական ստեղծագործությունից ներթափանցել է աշուղական երգարվեստ, ապա և գրականություն, պոեզիա:

Այդուհանդերձ աշուղ Իգիթի բանաստեղծական սրտի կենտրոնական զարկերակը սիրո թեման է: Եվ պատահական չէ, որ նրա երգերի ծանրակշիռ հատվածը սիրո երգերն են՝ իբրև խոստովանություններ, զգացմունքի գեղեցիկ պատմություններ: Բանաստեղծական նրբերանգների առատությամբ, հուզավառ տրամադրությամբ տոգորված այս տողերը իրավամբ կարելի է դասել աշուղական գրականության լավագույն ստեղծագործությունների շարքը.

Այս գիշեր խնդալով եկար,
Թուխ աչքերիդ լինեմ մատաղ,
Հյուսերդ շաղ տալով եկար,
Լույս երեսիդ լինեմ մատաղ: (ՇԻՄ, էջ 50)

Բարոյախրատական հնչերանգը աշուղի ստեղծագործության մեջ միահյուսվում է սիրային թեմային և ստանում է յուրահատուկ ոգեշունչ արտահայտություն: Հիշատակության է արժանի «Իմ պառավ յարը թանկ է» (ՇԻՄ, էջ 34) սիրային մոտիվներով խրատական երգը: Եթե Շերամի «Ես ջահել եմ, յարս՝ պառավ» երգիծական երգի մեջ[17] աշուղը քննադատում է աշխարհի կարգն ու կանոնը, տիրող բարքերը, տկարամիտ խորթ մորն ու հորը, իր բողոքը հայտնում պառավ յարի ու անարդար կյանքի հանդեպ. «Ես սիրուն եմ, յարս՝ չիրքին», «Ոսկու զոռով ինձ խաբեցին» տողերով, ապա Իգիթը ամեն ինչից վեր է դասում իր սիրեցյալ, թեև պառավ յարին՝ աչք չդնելով անգամ «օտարի գանձին անսահման»: Նրա համար իր փոքրիկ այգին ավելի թանկ է, քան ամբողջ աշխարհը.

---

[15] ***Ա.Քոչարյան***, Հայ գուսանական երգեր, Եր., 1976, էջ 204:
[16] «Արթնացումի երգ» բառեզրը վերցրել ենք Հ.Բախչինյանի «Հայ գրականության պատմություն XVII-XVIIIդդ.», գրքից, Եր., 1999, էջ 48:
[17] ***Շերամ,*** Երգեր, Եր., 1981, էջ 157:

Ես ուրիշի կոկոն վարդը չեմ ուզում,

Ինձ համար իմ պառավ յարը թանկ է, թանկ: (ՇԻՄ, էջ 34)

Հիրավի, երգը միայն հավատարիմ սիրո խոստովանություն չէ, սա աշուղի աշխարհզգացողության, մտքի խորության և կյանքի փիլիսոփայական ընկալման յուրատիպ արտահայտությունն է:

Սիրային երգերում բանաստեղծական տողերը լեցուն են գեղեցիկ համեմատություններով, մակդիրներով, ինչպես նաև թավոր խոսքերով: Օրինակ՝ սիրեցյալի աչքերը նուշ են, վարսերը՝ սյավ, բոյը՝ նոճի, ինքն էլ սիրուց ծարավ է, յարը՝ անհաս, նազան աղջիկ.

Աչքերդ նուշ, լեզուդ մեղուշ,

Ինքդ քնքուշ, նազիդ մեռնեմ,

Քայլվածքն անգամ, ինչպես կաքավ,

Վարսերդ սյավ, մազիդ մեռնեմ … (ՇԻՄ, էջ 54)

կամ.

Իմ յարը հիմա ալվան է հագե

Երկնքում չվող հավքերի նման,

Բոյ ու թիկունքը նոճի է դարձել,

Պարտեզում բուսած չինարի նման: («Ձմեռ է՝ ձյուն չի գա»)

Հավերժական սիրո կրակով այրված՝ նա էլ է տանջվում ու չարչարվում նվիրական զգացումի մշուշոտ անհայտնությունից.

Ասա՛, քո նազ անելն ի՞նչ է,

Սիրտս ու հոգիս հանելն ի՞նչ է,

Քո ինձնից խռովելն ի՞նչ է,

Խռով սրտիդ լինեմ մատաղ: (ՇԻՄ, էջ 51)

Իգիթի կյանքի գոյությունն էլ յարի հետ ապրելու ու մեռնելու պայմանի մեջ է.

Ապրեմ քեզ հետ, յա՛ր,

Մեռնեմ քեզ հետ, յա՛ր … (ՇԻՄ, էջ 16)

«Ա՜խ, իմ վառ սերը» երգի բանաստեղծական տողերը վկայում են, որ աշուղի համար սերը նվիրական, անկեղծ ու անխառն զգացմունք է: Նա սիրում է անձնազոհաբար և պատրաստ է մալուլ-մալուլ ման գալու, վառվելու ու մոխիր դառնալու.

Ա՜խ, իմ վառ սերը,
Վա՜խ, իմ վառ սերը,
Խլեցին, տարան, ինձ ի՞նչ թողեցին …

Աշուղի բանաստեղծական խոսքում յուրատեսակ հնչերանգ ունի երգիծական շեշտը: «Քավոր Մնացը», «Չար կինը», «Մեր Սահակը» և մի քանի ուրիշ երգեր առօրյան, ժամանակի բարքերը նուրբ հումորով ներկայացնող կենցաղային զվարճալի պատկերներ են, որոնցում ինքը՝ աշուղն էլ գործող անձ է դառնում.

Մեր Սահակը դռնից անցավ
Քիթ ու բերանը կարմրած,
Կարծես նռան ջուրն էր խմել,
Մարդիկ նայեցին զարմացած:
Շուտ մի՛ խմե, փեսա՛ Սահակ,
Թե չէ կլինես խայտառակ: («Մեր Սահակը»)

կամ՝

Իգիթն էլ Մնացի համար
Խոստացավ երգ գրել հարմար,
Այնուհետև դարձան եղբայր,
Շրջապատի քեֆը եկավ … («Քավոր Մնաց»)

Իգիթի երգերը հիմնականում հորինված են գրական հայերեն՝ համեմված ժողովրդական բարբառի հյութեղ արտահայտություններով: Օրինակ՝ «Յաղի հարսը աչքածակին չարիք է», «Բարալիկ-մարալիկ մեջքը», «Սիրտս ներսից մաղիկ-մաղիկ լալիս է», «Յարաբ ո՞ւր ես» և նման այլ դարձվածքներ: Հետաքրքրական է, որ Իգիթի բանաստեղծական մտածողությունը շատ ընդհանրություններ ունի աշուղ Շերամի լեզվի հետ: Երկու երգիչների բանաստեղծական տեքստերի համեմատությունը երևան է բերում օգտագործված բառերի, բառակապակցությունների, արտահայտությունների բազմաթիվ ընդհանրություններ: Ստորև ներկայացնում ենք երկու աշուղների բանաստեղծական տեքստերի համեմատությունները.

Աշուղ Իգիթ	***Աշուղ Շերամ***
Լույս պատկեր Ամեն անգամ աչքիս առաջ էր գալիս Արեգնային լույս պատկերդ, որդյա՛ն... *(Որդյակս)*	*Լույս պատկեր* Լույս պատկերդ սրտիս մեջը, Սրտիս մեջը նկարեն … *(Մագերիցդ տուր՝ քնարիս լար հյուսեմ)*
Մաղիկ-մաղիկ Սիրտս ներսից մաղիկ-մաղիկ է լալիս… *(Որդյակս)*	*Մաղիկ-մաղիկ* Ա՜խ, լալիս եմ մաղիկ-մաղիկ, չարդ տանեմ… *(Իմ սիրուհուն)*
Լույս երես Լույս երեսիդ լինեմ մատաղ… *(Համիդ մատաղ)*	*Լույս երես* Երեսդ լույս, աննմա՛ն կույս, հրեշտակ… *(Անգութ դաղաստան)*
Նոճի բոյ Նոճի բոյիդ լինեմ մատաղ… *(Համիդ մատաղ)*	*Նոճի բոյ* Բոյ ես քաշել նոճիներեն, Նայում եմ՝ սիրտս կտանի… *(Նազան աղջիկ)*
Կաքավ Քայլվածքն անգամ ինչպես կաքավ… *(Նազան աղջիկ)* Ման ես գալիս կաքավի պես… *(Հայաստանի աղջիկները)*	*Կաքավ* Կաքավի նման պար գալդ… *(Նազան աղջիկ)*
Դեղ ու ճար Վերքերիս դեղ ու ճար չկա… *(Սիրուց այրված)*	*Դեղ ու ճար* Ա՜խ, սովդաքար եմ, Անդեղ ու ճար եմ… *(Էն իմ սերն է)*

Մեկ ուրիշ աշուղական ավանդույթ ևս հոգեհարազատ է Իգիթին: Դա ծածկագրված տեքստերի գործածությունն է: Անհնարին է չնկատել, որ Իգիթի համար յարը առաջին հերթին ընկեր է, ընկերն էլ՝ սիրելի էակ, նեցուկ ու հենարան.

Տասնյակ տարի հույսով կապրեմ, թե յարս ինձ յար կլինի,
Այրված և խորված սրտիս բալասան ու ճար կլինի,
Կոտրած մեջքիս հենակ, նեցուկ, կենսապաշտպան սար կլինի,
Հույսս ի դերև չքացավ, մկրատ ունեմ: (ՇԻՄ, էջ 47)

Ինքնակենսագրական մոտիվներով ստեղծված «Տեսա» երգից ընդհանրացված, հավաքական տեղեկություններ ենք ստանում աշուղի մանկության վերաբերյալ.

Երբ ես ծնվեցի, աչքերս բաց արի,
Ջուրակը իր ձեռքին՝ իմ հորը տեսա… (ՇԻՄ, էջ 30)

Կենսագրական սքողված տողեր կան նաև «Որդյակս», «Նռան գինի»(ՇԻՄ, էջ 40), «Կաքավ» երգերում:

Ժամանակի ամեն մի իրադարձություն բեկվում ու երգչի ստեղծագործական մտքի ոսպնյակով անցնելով՝ երգի է վերածվում: Հարազատի ու մտերիմի կարոտի ցավն էլ նա բանաստեղծորեն է արտահայտում: 1988թ. երկրաշարժը խոր վերք թողեց Իգիթի հոգում.

Արցունքները դարձան գետեր,
Գետերն ելան լցվան ծովեր,
Սուգ ու շիվան ծովեր,
Թող անիծվի երկրաշարժը:[18]

Երգերի բանաստեղծական կառուցվածքը

Հատուկ ուշադրության է արժանի աշուղ Իգիթի երգերի բանաստեղծական կառուցվածքի քննությունը, որը հիմք է դառնում դրանց երաժշտականացման համար: Բոլոր երգերն ունեն չափածո ոտանավորի կառուցվածք: Բանաստեղծական տեքստը կազմված է քառատողից, հինգ, վեց, հազվադեպ՝ յոթ, ութ տողանի տներից: Դիտարկված շուրջ ութսուն երգերից քսանն ունեն տուն և կրկներգ կազմությունը: Օրինակ՝ «Կոլխոզի աղջիկ»(ՇԻՄ, էջ 19), «Բարև տարեք»(ՇԻՄ, էջ 27), «Տարան իմ յարը» (ՇԻՄ, էջ 32), «Նռան գինի»(ՇԻՄ, էջ 43), «Համիդ մատաղ» (ՇԻՄ, էջ 50), «Ա՜խ, իմ վառ սերը»(ՇԻՄ, էջ 63), «Հե՛տ արի, թառլա՛նս»(ՇԻՄ, էջ 66), «Կաքավ» և այլն: Որոշ երգերում օգտագործված է տուն+կրկնակ կառուցվածքային սկզբունքը («Մայրիկ»(ՇԻՄ, էջ 38), «Հայրիկ»(ՇԻՄ, էջ 25), «Դու իմ արև»(ՇԻՄ, էջ 52) և «Ես սիրեցի»): Ավելացնենք նաև, որ մի քանի երգերում էլ օգտագործված է տուն+կրկներգ+կրկնակ կառուցվածքի տեսակը («Այգաբացին»(ՇԻՄ,էջ 15),«Հազար ու մեկ նազով»(ՇԻՄ,էջ 61)):

Երգերի բանաստեղծական տները մեծմասամբ քառատողեր են. օրինակ՝ «Սայաթ-Նովա»(ՇԻՄ, էջ 7), «Իմ Երևան»(ՇԻՄ, էջ 9), «Սովե-

[18] «Բանվոր», 1989, 11 մայիսի:

տական Հայաստան»(ՇԻՄ, էջ 10),«Հայրենիքիս»(ՇԻՄ, էջ 13), «Գուսան» (ՇԻՄ, էջ 17), «Լենինական»(ՇԻՄ, էջ 21), «Բերեք գրեմ դիմումիս տակ» (ՇԻՄ, էջ 23), «Հայաստանի աղջիկները»(ՇԻՄ, էջ 29), «Տեսա»(ՇԻՄ, էջ 30), «Իմ պառավ յարը թանկ է» (ՇԻՄ, էջ 34), «Զարթի՛ր, անո՛ւշ կինս» (ՇԻՄ, էջ 36), «Որդյա՛կս»(ՇԻՄ, էջ 40) և այլն:

Հայտնի է, որ աշուղական երգերում շատ հաճախ բանաստեղծական միտքն ամփոփելու նպատակով իբրև ռեֆրեն հաճախ կրկնվում է երգի առաջին տան վերջին տողը, օրինակ՝ «Սովետական Հայաստան» (ՇԻՄ, էջ 10), «Հայաստանի աղջիկներ»(ՇԻՄ, էջ 29), «Զարթի՛ր, անո՛ւշ կինս» (ՇԻՄ, էջ 36), «Իմ պառավ յարը թանկ է» (ՇԻՄ, էջ 34), «Յարաբ ո՞ւր ես»(ՇԻՄ, էջ 42) և այլն:

Այս մասին Ա.Քոչարյանը նշում է. «Թասլիքների» (կարծում ենք սա վերաբերում է նաև աշուղական այլ տիպի երգերին – Հ.Ա.) կարևոր հատկանիշներից մեկն էլ այն է, որ նրա առաջին տան վերջին տողը կազմում է բանաստեղծության հիմնական մտքի առանցքը և նույնությամբ կրկնվում է ամեն տնից հետո»:[19] Երբեմն էլ կրկնակի դերում կարող է հանդես գալ կիսատողը կամ քառատողի վերջին բառը. օր.՝ «Գուսան», «Բերեք գրեմ դիմումի տակ», «Սայաթ-Նովա» և այլն: Ա.Քոչարյանի հավաստմամբ «Բանաստեղծական այս տողերն ունեն խոր հոգեբանական նշանակություն և զգալիորեն նպաստում են երաժշտության հուզականության խորացմանը»:[20]

Մեր կարծիքով, որոշ երգերի բանաստեղծական տեքստերում կատարված է արհեստական տողատում. օր.՝ Կարմիր Հոկտեմբեր» (ՇԻՄ, էջ 12) երգի բանաստեղծական տեքստի հիմքը տարբեր վանկաքանակների, վեց տողանի տունն է: Մինչդեռ այն կարող էր մեկնաբանվել որպես քառյակ՝ կազմված հավասարաչափ տասը վանկանի տողերից, այսպես.

---

[19] ***Ա.Քոչարյան***, նշվ. աշխ., էջ 28:
[20] Նույնը:

Տող	Բանաստեղծական տող	Վանկ	Տող	Բանաստեղծական տող	Վանկ
I	Քանի դեռ ողջ եմ,	5	I	Քանի դեռ ողջ եմ, Մտքով առողջ եմ,	10
II	Մտքով առողջ եմ,	5	II	Կյանքով բողբոջ եմ, Կարմի՛ր Հոկտեմբեր,	10
III	Կյանքով բողբոջ եմ, Կարմիր Հոկտեմբեր.	10	III	Քնարս գրկեմ, լարերին զարկեմ,	10
IV	Քնարս գրկեմ,	5	IV	Փառքդ գովերգեմ Կարմի՛ր Հոկտեմբեր:	10
V	Լարերին զարկեմ,	5	V		
VI	Փառքդ գովերգեմ Կարմիր Հոկտեմբեր	10	VI		

Մեր կողմից կատարված տողատումը չի խաթարում բանաստեղծության կառուցվածքը, ինչպես նաև խոսքի արտահայտչականությունը, իսկ մեղեդային շարադրանքը այս դեպքում առավել համահունչ է բանաստեղծությանը: Կարծում ենք՝ մեր առաջարկած խմբագրմամբ, այս պարագայում, յուրաքանչյուր քառատողի երրորդ և չորրորդ տողերը կկատարվեն որպես կրկնակ, ինչպես որ մի շարք ներքոհիշյալ երգերում ևս. օրինակ՝ «Հայրենիքիս»(ՇԻՄ, էջ 13), «Գուսան»(ՇԻՄ, էջ 17), «Լենինական» (ՇԻՄ, էջ 21), «Բերեք գրեմ դիմումիս տակ»(ՇԻՄ, էջ 23), «Հայաստանի աղջիկները»(ՇԻՄ, էջ 29) և ուրիշներ: Մի խոսքով, սրանք այն երգերն են, որոնք չունեն առանձնացված կրկնակ կամ կրկներգ:

Նույնը կարելի է ասել նաև «Նռան գինի»(ՇԻՄ, էջ 43) երգի մասին: Բանաստեղծական տունը կազմված է ութ վանկանի չորս տողից: Մինչդեռ այլ ձևով է կատարված երգի կրկներգի տողատումը.

տող	Բանաստեղծական տող	Վանկ	Տող	Բանաստեղծական տող	Վանկ
I	Նռան գինի	4	I	Նռան գինի, հոգս մի՛ք անի	8
II	Հոգս մի՛ք անի	4	II	Քամողը մեր Թամարան է,	8
III	Քամողը մեր Թամարան է,	8	II I	Որքան կուզեք, անո՛ւշ խմեք,	8
IV	Որքան կուզեք,	4	I V	Նռան գինին ձեզ համար է:	
V	Անո՛ւշ խմեք	4	V		
VI	Նռան գինին ձեզ համար է:	8	V I		

Ասվածը նորից հաստատվում է մեղեդային շարադրանքով, որն էլ կառուցվածքային առանձնահատկություններով չի հակասում նման տողատմանը: Մինչդեռ նույնը չի կարելի ասել «Համիդ մատաղ»(ՇԻՄ, էջ 50) երգի վերաբերյալ: Այստեղ խոսքն ու մեղեդին միանգամայն ներդաշն են հյուսված: Ընդհակառակը, միակերպ կրկնվող երաժշտական կառուցվածքները ամենևին էլ միօրինակ չեն հնչում՝ շնորհիվ պատկերավոր բանաստեղծական խոսքի:

Նշենք նաև, որ աշուղական հայտնի երգերի հետ համեմատությունից կարելի է ենթադրել, որ Իգիթն իր ստեղծագործություններում այնքան էլ չէր հետևում աշուղական բանաստեղծական կաղապարային ձևերին: Սա իր ժամանակի պահանջն էր, որ կիրառվել էր դեռևս XX դարի սկզբներին: Այս մասին է գրում նաև Կ.Դուրգարյանը. «Դարասկզբի աշուղների երգերը հիմնովին տարբերվում են հին վարպետների ստեղծագործություններից ոչ միայն իրենց թեմատիկայով, այլև կառուցվածքով, ձևով: Այլևս քիչ էին հետևում ավանդական տաղաչափական օրենքներին, խուսափում էին արևելյան միապաղաղ եղանակներից, ստեղծում էին ինքնուրույն եղանակներ, որ մեծ մասամբ մոտ էին հայկական ժողովրդական երգերին»:[21] Իբրև ժողովրդական բանաստեղծ-երգիչ՝ Իգիթը հանրաճանաչություն էր վայելում: Նրա ստեղծագործություններում արծարծված թեմաները ժողովրդի համար հոգեհարազատ էին: Հաճախ էր լինում

[21] Շիրակի հայ աշուղներ, կազմեց և խմբագրեց Կ.Դուրգարյանը, Եր., 1986, էջ 17:

աշխատավորների շրջանում և իր երգով ոգևորում նրանց ապրելու, ստեղծագործելու և արարելու:

Իգիթի երգերը հայ մարդու կյանքի, նրա ապրումների ու զգացմունքների արտացոլումն է ժամանակի հայելու մեջ:

Երգերի տաղաչափական առանձնահատկությունները

Իգիթի երգերն աչքի են ընկնում հորինվածքի անկաշկանդ ազատությամբ, կառուցվածքի հստակությամբ, միաժամանակ մեղեդային շարադրանքի արտակարգ պարզությամբ: Զգացմունքների արտահայտման ջերմ քնարականությունը և հուզազգացողական նրբերանգների հարուստ արտահայտչականությունը այդ երգերի բնորոշ առանձնահատկություններից են: Նկատենք, որ Իգիթի նույնիսկ ավանդական տաղաչափությամբ հորինված տեքստերի մեղեդիները շատ դեպքերում գրեթե առնչություն չունեն աշուղական կանոնիկ եղանակների հետ, և նրա երգերի առանձին օրինակներ ավելի հարազատ են քաղաքային ժողովրդական երգաստեղծության մտածողությանը, իսկ ելևէջի ժառանգման ուղին տանում է դեպի Շերամի արվեստը:[22]

Իգիթի երգերի տաղաչափությունը կատարվել է վանկաչափական մոդելավորման մեթոդով:[23] Նրա հորինվածքներում գործածված են տաղաչափական տարբեր կառուցվածքներ՝ տողի բաժանման տարատեսակներով: 8,11,16 վանկանի տողերով հորինված երգերը, որոնք հայ աշուղներն ավելի հաճախ են գործածել, Իգիթի երգերում նույնպես մեծ թիվ են կազմում, իսկ այլևայլ չափերով՝ 15 վանկանի (5+5+5), 10 (5+5), 13 (4+4+4+1), կամ էլ խառը չափերով՝ 15 (I տող-5, II տող-5, III տող-10, IV տող-5,V տող-5,VI տող-10) վանկերով հորինված տողերը համեմատաբար սակավ են: Իգիթի համար հատկապես բնութագրական համարելով 8 և 11 վանկանի տողերից կազմված տներով երգերը՝ փորձենք անդրադառնալ դրանց տաղաչափական որոշ մանրամասնությունների: Ներկայաց-

---

22 *Հ.Ափինյան*, Աշուղ Իգիթի երգերը, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 6, Գյումրի, 2003, էջ 99-104:

23 *Կ.Խուդաբաշյան*, Հայ ավանդական երգի տաղաչափական համակարգի հարցերի շուրջ, «Հայ ժողովրդական մշակույթ», հանրապետական IX գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Եր.,1997, էջ 23-24:

նում ենք 8 վանկանի տողերով հորինված երգերի բանաստեղծական կառույցների աղյուսակը՝ տողի ներքին վանկային տրոհման պատկերով.

N	*էջ*	*Երգի վերնագիրը*	*չափը*	*տունն՝ ըստ տողերի*	*վանկերի տրոհումը*
1	2	3	4	5	6
1	9	Իմ Երևան	3/8	4տող,տողը՝ 8 վանկ	4 + 4
2	10	Սովետական Հայաստան	4/4	4տող,տողը՝ 8 վանկ	4 + 4
3	29	Հայաստանի աղջիկները	5/4	4տող,տողը՝ 8 վանկ	4 + 4
4	42	Յարաբ ո՞ւր ես	4/4	4տող,տողը՝ 8 վանկ	4 + 4
5	50	Ով, գեղուհի	6/8	4տող,տողը՝ 8 վանկ	4 + 4
6	68	Նորապսակ հարսն ու փեսեն	6/4	4տող,տողը՝ 8 վանկ	4 + 4
7	25	Հայրիկ	4/4	4տող,+ կրկնակ՝ 2 տող,	8 վանկ (4 + 4) 8 վանկ (4 + 4)
8	38	Մայրիկ	6/8	4 տող + կրկնակ՝ 2 տող	8 վանկ (4 + 4) 8 վանկ (4 + 4)
9	52	Դու իմ արև	6/8	3 տող + կրկնակ՝ 2 տող	8 վանկ (4 + 4) 8 վանկ (4 +4)
10	61	Հազար ու մեկ նազով	4/4	3տող+կրկնակ՝ 2 տող + կրկներգ՝ 4 տող	8 վանկ (4 + 4) 8 վանկ (4 + 4) 6 վանկ (3 + 3)
11	43	Նռան գինի	6/8	4 տող+ կրկներգ՝ 6 տող	8 վանկ (4 + 4) 4 վ.+4վ.+8վ.+ 4 վ.+4վ.+8վ.
12	50	Համիդ մատաղ	4/4	4 տող + կրկներգ՝ 4 տող	8 վ. (4 + 4) 4 վ. (2 + 2)
13	86	Հե՛տ արի, թառլա՛նս	6/8	6 տող+ կրկներգ՝ 4 տող	8 վ. (4 + 4) 6 վ. (3 + 3)

Աղյուսակում նշված 13 երգերից տասը՝ 8 վանկանի տողերից կազմված քառատող կառույցներ են, ընդ որում, դրանցից 2-ում (թ. 7, 8) քառատող, և թիվ 9-ում եռատող տանը հավելվել է նույն վանկաքանակի երկտող կրկնակը: Սրանք դուբեհիթներին բնորոշ կառուցվածքներ են:[24] Թիվ 11,12 քառատող և թիվ 13 վեցտողանի կառույցներում բանաստեղծական տանը հավելված կրկներգերը թեև տարբեր վանկաքանակներ ունեն, բայց առանձնակի փոփոխություն չեն մտցնում երգի վանկաչափության մեջ:

Այժմ դիտարկենք 8 վանկանի տողերով կառույցների համադրությունը՝ երաժշտական ոտքի հետ զուգորդված, որտեղ ամանակը* ութերորդական տևողությունն է: Ընդհանրացված պատկերն այսպիսին է.

---

[24] *Ա.Քոչարյան,* նշվ. աշխ., էջ 24:

* Չայնավորի կամ վանկի տևողությունը կամ չափը: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 45:

10 ամանակ (5+5), մեկ այլ դեպքում՝ 14 ամանակ (6+8), 11ամանակ (5 + 6)
8 վանկ (4 + 4) 8 վանկ (4+4) 8 վանկ (4 + 4)

Բերված օրինակները ցույց են տալիս, որ երաժշտական և բանաստեղծական տողերի միջև եղած միավորների տարբերությունը մեծ չէ, որն իբրև կանոն հիմնականում հարթեցվում է ամանակադրության հավասարատևության օրենքների համեմատ:[25] Սա իր հերթին հանգեցնում է մեղեդիական և վանկական որոշակի փոխհարաբերությունների՝ արտահայտված բնութագրական ռիթմական պատկերներով, որոնք էլ երգերում ապահովում են մեղեդիների շարադրանքը կայուն մետրերում: Իգիթի երգերում վանկի եղանակավորումը մեծ մասամբ զուսպ է, և ծորերգվող ծավալուն վանկեր հազվադեպ են: 3/8, 6/8, 6/4 չափերում շարադրված մեղեդիների համար բնորոշ են վանկաչափական նույն կաղապարները: Չնչին տարբերություններ կարելի է նկատել 4/4 չափում շարադրված երգերում: Վերլուծությունը վկայում է (տե՛ս Ա գծապատկեր), որ վանկաչափական նման կաղապարների կարելի է հանդիպել քաղաքային երգերում ու Շերամի մոտ: Ընդհանրացված վանկաչափական կաղապարները, որոնք կիրառված են 8 վանկանի տողերով երգերում, բաժանելի են մի քանի տիպերի.



Ա տիպի խմբավորման մեջ են՝ թիվ 1, 2, 3, 6, 10,12,13 երգերը: Իսկ Բ տիպի մեջ՝ թիվ 4-ը և 11-ը: Գ տիպում՝ թիվ 12-ը, Դ տիպի մեջ՝ թիվ 9-ը, Ե տիպում՝ թիվ 5-ը:

«Շիրակն իմ մուսան» ժողովածուի մեջ զետեղված երգերից 9-ը 11 վանկանի քառատող կառույցներ են՝ առանց կրկնակների և կրկներգերի:

[25] *Կոմիտաս*, Մի թռուցիկ ակնարկ հայ ժողովրդական երաժշտության վրա (ձեռագիր) ԳԱԹ, Կոմիտասի դիվան:

Բացառություն է «Բարև տարեք» երգը, որում բանաստեղծական տանը հավելված քառատող կրկներգը շարադրված է 4-4, 5-5, վանկանի տողերի հաջորդմամբ.

1	2	3	4	5	6
1	17	Գուսան	4/8		4+4+3
2	27	Բարև տարեք	6/8	Կրկներգ	6+5
3	30	Տեսա	6/8		5+6 (6+5)
4	34	Իմ պառավ յարը	6/8,5/8,7/8, 6/8		4+4+3
5	36	Զարթի՛ր, անո՛ւշ կինս	6/8		4+4+3
6	40	Որդյակ	3/8		4+4+3
7	49	Սիրելիս	6/8		4+4+3
8	56	Ինչի՞ համար խռովել ես	6/8		4+4+3
9	59	Մարմար կրծքիդ	6/8		4+4+3

Ակներև է, որ տողը հիմնականում տրոհվում է 4+4+3 և 6+5 ոտքերի:

Վանկերը երաժշտական ոտքերին միանում են հետևյալ ձևերով.

12 ամանակ (4 + 4 + 4) , 15 ամանակ (5 + 5 + 5) , 18 ամանակ (6+6+6),
11վանկ (4 + 4 + 3) 11վանկ (4 + 4 + 3) 11վանկ (4 +4 +3)

17 ամանակ (5 + 6 + 6) 11ամանակ (5 + 5 + 6) ,
11վանկ (4 + 4 + 3) 11վանկ (4 + 4 + 3)

5 + 6 տրոհման դեպքում՝ 18ամանակ(8 + 10) 12ամանակ (5 + 7)
11վանկ (6 + 5) 11վանկ (6 + 5)

Բերված կաղապարները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր վանկի և ամանակի տարբերությունը 1 կամ 2 միավոր է, որը ևս Իգիթի երգերում գործող կայուն ռիթմապատկերի արտահայտություններից է, որը պահպանվում է նաև հաջորդ՝ II, III տներում: 11 վանկանի տողերի ընդհանրացված վանկաչափական կաղապարներն են.

1. ♪. 𝅘𝅥𝅯 ♪ ♪ | ♪. 𝅘𝅥𝅯 ♪ ♪ | ♪ ♪ ♩

2. ♪. 𝅘𝅥𝅯 ♪ 𝅘𝅥𝅯 𝅘𝅥𝅯 ♩ | ♩ ♪ ♪ ♪ ♪ | 𝅗𝅥.

3. ♪ ♩ | ♪ ♩ | ♪ ♩ | ♪ ♩ | ♪ ♩ | ♩.

4. 𝄾 ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ | ♪ ♪ ♪ ♪ ♩

5. ♪ ♩ ♪ ♩ | ♪ ♩ ♪ ♩ | ♩ ♪ ♩.

6. 𝄾 ♪ ♪ | ♪ ♩ | ♪ ♩ | ♪ ♩ | ♪ ♩ | ♪ ♩ | ♩.

7. ♩ ♪ ♪ ♩ | ♪ ♪ ♪ ♩.

Հետաքրքրական է, որ 8 և 11 վանկանի վանկաչափական կաղապարներում գրեթե չեն հանդիպում նմանատիպ պատկերներ: Սա նույնպես աշուղական տաղաչափական կանոնների նկատմամբ մոտեցման ապացույց է: Իբրև տիպական օրինակ՝ վերլուծենք «Իմ պառավ յարը թանկ է» երգը.



11 վանկանի տողերով շարադրված բանաստեղծական տողը տրոհվում է 4 + 4 + 3 վանկերի, որն այսպես է զուգորդվում երաժշտական ոտքին.

I տող՝	15 ամանակ (5 + 5 + 5)	III տող՝	15 ամանակ (5 + 5 + 5)
	11վանկ (4 + 4 + 3)		11վանկ (4+ 4 + 3)
II տող՝	15ամանակ (5 + 5 + 5)	I V տող՝	15 ամանակ (5 + 5 + 5)
	11վանկ (4 + 4 + 3)		11վանկ (4 + 4 + 3)

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծական բոլոր տողերում վանկաքանակը և նրա տրոհման սկզբունքը նույնն են: Մինչդեռ երաժշտական

տողում նկատվում են տարբերություններ, որոնք ռիթմապատկերներում տեղ գտած տարբերակման հետևանք են: Այսպես՝ I տողի II կիսատողում շեշտի փոփոխության պատճառով ռիթմական միավորի մեջ մեկ ամանակ պակասում է, և տակտում չափը 6/8-ից վերածվում է 5/8-ի, իսկ հաջորդ տակտում արդեն վանկի եղանակավորման ընդլայնման շնորհիվ 6/8 չափը վերականգնվում է (տե՛ս նոտային օրինակի 1,2,3 տակտերը):

Այլ է պատկերը III տողում: Այս անգամ վանկի եղանակավորման ընդլայնումը ամանակների ավելացմամբ է պայմանավորված, ինչի հետևանքով չափը փոխվում է 7/8-ի (տե՛ս նոտային օրինակի՝ III տողի 3-4-րդ տակտերը): Նման մեղեդային տարբերակումները երգի վանկաչափական մոդելում էական փոփոխություններ չեն մտցնում և ավելի շատ արտահայտչականությունն ընդգծելու նպատակ ունեն: Վանկաչափական կաղապարը կայուն է և, ըստ տողերի, ունի հետևյալ պատկերը.



Երգում կիրառված IV պեռն, ավարտեղ, քողաբորբ ոտքերը քառատողում միմյանց են հաջորդում որոշակի պարբերականությամբ.

I, II, III տող՝ IV պեռն + I V պեռն + ավարտեղ

IV տող՝ IV պեռն + I V պեռն + քողաբորբ

Իգիթի երգերում տաղաչափական այս ոտքերը հաճախ են գործածվում: Դրանք հանդիպում են նաև Շիրակի ժողովրդական բազմաթիվ երգերում: Մնում է ավելացնել, որ Իգիթի և այլ աշուղների երգարվեստի տաղաչափական առանձնահատկությունների համեմատական վերլուծության հիման վրա հետագայում կարելի է հասնել XX դարի Շիրակի աշուղական երգին բնորոշ հատկանիշների ընդհանրացման, այդ թվում նաև տաղաչափական օրինաչափությունների ըստ ամենայնի ճանաչման և սահմանման:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշուղ Իգիթը թողել է գրական ու երաժշտական ստվար ժառանգություն՝ թատերական պիեսներ, պոեմներ, դրամաներ, երգախառն հեքիաթներ, ինքնակենսագրական հուշապատումներ: Նրա հատկապես բանաստեղծական խոսքն առանձնանում է ջերմ հուզականությամբ ու արտահայտչական ներկապնակի բազմերանգությամբ: Հայրենիք և սեր, գովասանություն և խրատ, կարոտ և բողոք. սրանք են այն մոտիվները, որոնք դառնում են աշուղի ստեղծագործության մեջ արծարծման թեմաներ: Առանձնահատուկ շեշտադրություն ունի հայրենիքի գովերգման թեման. մեկտեղվում են *հայրենի երկիր՝ Հայաստան, հայրենի քաղաք, ծննդավայր* հասկացությունները:

Իգիթը նոր ու նորացած հայրենիք փառաբանող երգիչ է: Նրա երգերի հերոսները նոր ժամանակների մարդիկ են: Ազգի փառապանծ որդիների՝ Անդրանիկի, Դրոյի, Վիկտոր Համբարձումյանի, Ավետիք Իսահակյանի գովերգումը բաղձալի թեմա է: Իգիթը Սայաթ-Նովայի ու Ջիվանու գործի շարունակողն է, հրապարակախոս և գովասան:

Այդուամենայնիվ, նրա քնարի հիմնական լարը սերն է: Այս երգերը ջերմ խոստովանություններ են, զգացմունքի գեղեցիկ պատմություններ և դրանցից շատերը իրենց բանաստեղծական նրբերանգների առատությամբ, հուզավառ տրամադրության արտահայտությամբ՝ իրավամբ կարելի է դասել հայ աշուղական գրականության լավագույն ստեղծագործությունների շարքը:

Աշուղ Իգիթի արտաքուստ զուսպ բանաստեղծական աշխարհը լեցուն է թախիծով, նուրբ հումորով: Յուրատեսակ հնչերանգ ունի երգիծական շեշտը. դրանք առօրյան, ժամանակի բարքերը ներկայացնող կենցաղային զվարճալի պատկերներ են:

Իգիթի երգերը հիմնականում հորինված են գրական հայերենով՝ համեմված բարբառի հյութեղ արտահայտություններով: Օրինակ՝ «Յաղի հարսը աչքածակին չարիք է», «Բարալիկ մարալիկ մեջք» և այլ արտահայտությունները դրա փայլուն վկայություններ են:

Որոշ երգերում գործածված է աշուղական ավանդական ծածկագրված տեքստերի կիրառումը: Ինքնակենսագրական մոտիվներով ստեղծված երգերից ընդհանրացված, հավաքական տեղեկություններ ենք

ստանում աշուղի մանկության կյանքի, նաև ժամանակաշրջանի վերաբերյալ:

Բանաստեղծական կառուցվածքները բազմակերպ են և ունեն տուն+կրկներգ, տուն+կրկնակ, հանդիպում են նաև տուն+կրկներգ+կրկնակ կառուցվածքները:

Թեև բանաստեղծությունները կարելի է տեղադրել ավանդական հայտնի ձևերի մեջ, այդուամենայնիվ դրանք բանաստեղծական ազատ հորինումներ են, որ կիրառվել է դեռևս 20-րդ դարի սկզբներից: Դա հատկապես արտացոլվել է աշուղ Շերամի ստեղծագործություններում, որի հետևորդն ու ժառանգորդն է աշուղ Իգիթը:

Հատուկ ուշադրության է արժանի աշուղ Իգիթի երգերի երաժշտական լեզուն: Յուրաքանչյուր երգ իր սեփական եղանակն ունի, որոնց հատուկ է մեղեդիակազմության պարզություն, ելևէջի ծավալման արտակարգ երգայնություն, կառուցվածքային ամբողջականություն: Այս և նման բնորոշումներով առանձնացող հորինվածքներում դժվար չէ նկատել գեղջկական երգերի հետ ունեցած ակունքային սերտ կապը: Մեղեդիական արվեստը սնուցող աղբյուրներից մեկն էլ քաղաքային երգի ելևէջներն են, որոնցով ներծծված են շատ ու շատ հորինումներ: Մնալով ազգային երաժշտամտածողության սահմաններում՝ աշուղը բնորոշ ձայնակարգային հենքի վրա ստեղծում է ուրույն ելևէջային բառապաշար: Այսպես՝ երգերից մեկն իր ելևէջային և ռիթմական կառույցով կարող է հիշեցնել գեղջկական ուրախ մի պարերգ, մեկ ուրիշը՝ նվագարանային եղանակի երգային տարբերակ է: Աշուղը ժողովրդական երգերին հատուկ ոճով հորինում է բազմաթիվ օրինակներ: Ավանդական մեղեդիներ գրեթե չեն հանդիպում:

Աշուղ Իգիթի ստեղծագործության մեջ առանձնահատուկ դրսևորում է ստացել ժամանակի քայլերգային ռիթմական ելևէջների կիրառումը: Երաժշտական լեզվի պարզությամբ, մատչելիությամբ, քառյակային կառուցվածքով, որոշ երգերում նկատելի են առանձնահատուկ գծեր, որոնք հիշեցնում են հայ քաղաքային ռոմանսը. փոքր ձայնածավալ, ելևէջի նվազագույն եղանակավորում, հանգաձևերի հավասարաչափ բաժանում և այլ հատկանիշները երգերի համար ապահովում են զգացմունքի անմիջականություն, արտահայտման սրտաբաց տոն:

Աշուղ Իգիթը 20-րդ դարի ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի տիպական ներկայացուցիչ է, ուրույն մտածողությամբ ստեղծագործող, որի երգերը ոչ միայն սիրված ու տարածված են, այլև հետաքրքրություն են ներկայացնում իբրև ժամանակի արտահայտություն: Անտարակույս, աշուղի ժառանգությունն իր ողջ ծավալով հետայսու էլ հարստացնելու է հայ աշուղական երգի շտեմարանը:

Աշուղ Իգիթ

Ա Ն Տ Ի Պ Ե Ր Գ Ե Ր

ԱՐԻ ՍԻՐՈՒՆ



Արի,՝ սիրո՛ւն, էլ մի՛ մնա խռովի պես,
Ծոցիս մեջը քեզ կպահեմ վարդի պես,
Ինձ մի՛ գցիր չոլերը փահլուլի պես,
Ծառել է բոյդ չինարի ծառի պես:

Դե, շո՛ւտ արի, իմ խոսքերին հավատա՛,
Ուր որ գնաս, ինձանից լավը չկա,
Իմացի՛ր, որ այս աշխարհում մահը կա,
Արի՛ սիրենք իրար ազնիվ մարդի պես:

ԱՌԱՎՈՏ ՎԱՂ



Առավոտ վաղ լուր բերեցին՝ գալիս ես,
Քո թանկագին ճամփեքին մատաղ լինեմ,
Բաց ճակատով համբույր - բարև տալիս ես,
Քո թանկագին ճամփեքին մատաղ լինեմ:

Ինչ լավ եղավ, որ եկար,
Հաղթանակով տուն ու տեղը իսպառ մոռացել ես,
Մի նամակ էլ չես գրում, թե ինչպես ես,
Քո թանկագին ճամփեքին մատաղ լինեմ:*

Չորս տարի է՝ ինձանից հեռացել ես,
Քո տուն ու տեղը իսպառ մոռացել ես,
Մի նամակ էլ չես գրում, թե ինչպես ես,
Քո թանկագին ճամփեքին մատաղ լինեմ:

* Այս 4 տողերը կրկնվում են ամեն տան վերջում:

ԱՄՊԵՐՆ ԵԼԱՆ



Ամպերն ելան կամար կապած,
Հովերն իջան հանդերին,
Յար կանչելով աչքս մնաց,
Մութ ու հեռու ճամփեքին:

Սեգ սարերի զուլա՛լ ջրեր,
Ձեր էդ չքնաղ ափերին,
Ասե՛ք յարաբ ա՞խ, չե՞ք տեսել,
Հեռու կորած իմ յարին:

Դուք էլ յարի փափագ ունեք,
Ձեր զով, զուլալ սրտի մեջ,
Գիշեր, ցերեկ հառաչում եք
Ձեր ցավերով միշտ անվերջ:

Ձեզ պես ես էլ հանդերն ընկած,
Թափառում եմ էն օրից,
Ա՞խ, թե գտնեք իգիթ յարիս,
Բարև՛ տարեք դուք ինձնից:

ԱՂՋԻ՛, ԱՐԻ՛



Աղջի՛, արի՛ մեր բաղումը խաղ անենք,
Խաղի միջին շամամներդ թաղ անենք,
Արի՛, խո՛սք տուր մեր գործերը սաղ անենք,
Նռան գինին կուլաներով շաղ անենք:

Լցրած թասերիդ մատաղ,
Արած բասերիդ մատաղ,
Նորապսակ հարսի պես
Հագած խասերիդ մատաղ:

Աղջի՛, արի՛ էս հարսնիքում խաղ ասա,
Քո խաղերը ղոնախներիս կսազա,
Իմ քեֆերը թազա փեսի հավաս ա,
Մուրազներս սրտիդ մոտ, չրա՛ղ արա:

Լցրած թասերիդ մատաղ,
Արած բասերիդ մատաղ,
Նորապսակ հարսի պես
Հագած խասերիդ մատաղ:

ԱՆԳԻՆ ԵՍ, ԶԱՆԳԻՆ ԵՍ



Ես քեզ տեսա պարտեզում առավոտ վաղ,
Անգին ես, զանգին ես, դու թանկագին ես,
Կուրծք ու լենքդ արել ես շամամի թաղ,
Անգին ես, զանգին ես, դու թանկագին ես:

Քեզ սազ կգա պատուհանից դուրս աշել,
Ջահել-ջիվան սիրտ ու թոքերս մաշել,
Առավոտից մինչև գիշեր քեզ պաչել,
Անգին ես, զանգին ես, դու թանկագին ես:

Ես եղել եմ պատերազմի մարտերում,
Քո սերն է միայն իմ սրտում պահվում,
Հիմա տանից դու՛րս արի, քեզ եմ սպասում,
Անգին ես, զանգին ես, դու թանկագին ես:

Հենց էսօր ուզում եմ քեզ հետ զագս գնալ,

Դուդուկով հարսնիք անել, զվարճանալ,
Մի՛ տխրի, այժմ պետք է ուրախանալ,
Անգին ես, զանգին ես, դու թանկագին ես:

Երևի թե մոռացել ես՝ ես ով եմ,
Ես Լենինականի գուսան Իգիթն եմ,
Իմ ախպոր տղերքի մոտ ես քեզ գովեմ,
Անգին ես, զանգին ես, դու թանկագին ես:

ԱՐՏԱՇԱՏ



Արտաշատը բաղավայր է,
Սիրու՛ն ջան, խաղերո՛վ արի,
Արարատյան դաշտավայր է,(2)
Նախշու՛ն ջան, տաղերո՛վ արի,
Կոլխոզի բաղերո՛վ արի:

Դու հովտի մեջ քայլող եղնիկ,
Դեմքդ՝ լուսին, ծամդ՝ ծաղիկ,
Բերանիդ սոխակի տաղիկ, (2)
Անգի՛ն ջան, խաղերո՛վ արի,
Վարդերի շաղերո՛վ արի:

Ես խաղողի վազը գովեմ,
Կոլխոզուհու նազը գովեմ,
Քյամանին ու սազը գովեմ, (2)
Հոգյա՛կ ջան, տաղերո՛վ արի,
Մրգերի շաղերո՛վ արի:

ԱՇԽԱՐՀԻ ՉԱՓ



Սիրում եմ քեզ աշխարհի չափ, անու՛շ ջան,
Հարգում եմ քեզ աշխարհի չափ, անու՛շ ջան,
Պատվում եմ քեզ աշխարհի չափ, անու՛շ ջան,
Դե՛, շու՛տ արի,
Սիրտ մի՛ մարի,
Մխիթարի, անու՛շ ջան,
Գովում եմ քեզ աշխարհի չափ, անո՛ւշ ջան:

ԱՆԳԻՆՍ



Առանց քեզ ի՞նչ կանեմ աշխարհի փառքը,
Երբ մոտս չես, աննմա՛նս, անգի՛նս,
Անգամ ձեռքիս չի հնչում իմ ջութակը, (2)
Կարծես թուլցել են մատներս, անգի՛նս:

Ճիշտ են ասել գիտուն մարդիկ շատ վաղուց՝
Յարը մարդու կյանքի կեսն է հնուց,
Թե մենակ մնացի կհիշես հոգուց, (2)
Սոխակի պես կմորմոքաս, անգի՛նս:

Ես տնկիներ դրի, բարիք չտեսա,
Սիրուհների մեջ ինձ հարմար չտեսա,
Շուրջս լեռներ ապավեն սար չտեսա, (2)
Քեզնից մի՛ կտրի հույսերս, անգի՛նս:

ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ



Բարձր բերքի համար միշտ պայքարում ես,
Լայնորեն կիրառում գիտության փորձը,
Վարի ժամանակ հողը փխրեցնում ես, (2)
Որ ծիլեր տան ու դառնան լուսե կնգուղ,
Աճեցնում, շունչ ես տալիս աներկյուղ:

Հենց որ բամբակի ծիլերը կերևան,
Կատարում ես կուլտիվացիա ու քաղհան,
Որից հետո նոսրացնում ժրաջան, (2)
Որ ծիլեր տան ու դառնան լուսե կնգուղ,
Աճեցնում, շունչ ես տալիս աներկյուղ:

Երբ տեսնում ես, բամբակը թոշնում, ընկնում,
Իսկույն ջրին օգնության ես դու կանչում,
Կատարում ես մեծ խնամքով ծայրատում, (2)
Որ ծիլեր տան ու դառնան լուսե կնգուղ,
Աճեցնում, շունչ ես տալիս աներկյուղ:

ԲԱՂՆԻՔ



Սապոն չկա, բաղնիք կերթաս,
Շարմաղ, մախմուր լանջիդ մեռնեմ,
Չես հարցնե, թե ում կաշեմ,
Սևորակ աչքերիդ մեռնեմ:

Դու ի՞նչ կանես սապոն, բաղնիք,
Արի՛ էրթանք, ջխտիկ էղնինք,
Էս շաբթու էնենք հարսանիք,
Նուրբ, քնքուշ հասակիդ մեռնեմ:

Մերս քո ճամփեն կսպասե,
Կսե՝ Զարիկս լավ հարս է,
Ամեն թարաֆեն թանկ խաս է,
Ոսկեշող անունիդ մեռնիմ:

Իգիթն ըսավ՝ չարդ տանեմ,
Դուխի սապոնով քեզ կառնեմ,
Առանց բաղնիք մեր տուն տանեմ,
Մանրաքելք տոտերիդ մեռնեմ:

ԲԱՐՈՎ ՏԵՍԱ



Բարով տեսա իմ սիրուհուն,
Աչքերն աստղերի նման է, (2)
Սիրով տեսա իմ գեղուհուն,
Ճակատն արևի նման է: (2)

Ա՜խ, յա՛ր, ջա՛ն յար,
Ճակատն արևի նման է:

Դու կաքավ ես քարամիջում,
Պար ես բռնել պարամիջում, (2)
Անուն ունես դարամիջում,
Բոյդ չինարի նման է: (2)

Ա՜խ, յա՛ր, ջան յար,
Բոյդ չինարի նման է:

Ման ես գալիս կանաչ բաղը,
Արի՛ գնանք մտնենք քաղը, (2)
Պիտի երգեմ սիրուդ խաղը,
Քելքդ եղնիկի նման է: (2)
Ա՜խ, յա՛ր, ջան յար,
Քելքդ եղնիկի նման է:

ԲԵՐՔԻ ԵՐԳ



Ես քեզ մատաղ, կոլխոզնի՛կ յար, (2)

Բոյիդ ես, սոյիդ ես, մատաղ քեզ, յա՛ր,

Քո դաշտերի ցողունները ծլեն, ծաղկեն, դառնան հազար,

Ցողին ես, բոյին ես, բերքը մեր հազար,

Հազար, հազար, բերքը մեր հազար: (2)

Այս գարնանը կանենք մեր վար, (2)

Վարին ես, ցանին ես, մատաղ քեզ, յա՛ր,

Քո կալերի հատիկները ջրաղաց գնան, ալյուր դառնան,

Ցողին ես, բոյին ես, բերքը մեր հազար:

Հազար, հազար, բերքը մեր հազար: (2)

ԲԱՐԱԼԻԿ - ՄԱՐԱԼԻԿ



Յարիս տեսա էն թաղում,
Ման էր գալիս շեն բաղում, (2)
Ծիծաղում էր յարի հետ,
Ման էր գալիս ու խաղում: (2)

Բարալիկ-մարալիկ նուրբ մեջքը,
Խելքս տարել է տեսքը: (2)

Ես սիրեցի էդ յարիս,
Օտարն առավ թառլանիս, (2)
Ձեռքիցս թռավ, գնաց,
Ինձ թողեց մորմոքելիս: (2)

Բարալիկ-մարալիկ նուրբ մեջքը,
Խելքս տարել է տեսքը: (2)

ԳԱՐՆԱՆ ԱՆՈՒՇ ՀՈՎԵՐՈՎ



Գարնան անուշ հովերով,
Քեզ կգովեմ երգերով,
Իմ ջեյրան-հեյրա՛ն աղջիկ,
Դե, շու՛տ արի գովերով: (2)

Երևանում շոգ կասենք,
Մեր կոլխոզում շոգ կասենք,
Էսպես իրար փարվելով,
Անուշ ձայնով խաղ կասենք: (2)

Լեզուդ հանի հովացնեմ,
Պաղ շաքարով զովացնեմ,
Իմ կյանքի ընկե՛ր աղջիկ,
Մեր կոլխոզը շենացնեմ: (2)

Արի՛ շաղով, շաղշաղով,
Հասնենք բաղը քաղքաղով,
Քանի Իգիթը ջահել է,
Խաղող քաղենք խալվարով: (2)

ԴԵ, ՄՈՏԵՑԻՐ



Դե՛, մոտեցի՛ր, ինձ փարվի՛ր,
Իմ անուշի՛կ, սիրելի,
Թներովդ ինձ փարվի՛ր,
Չնաշխարհիկ գովելի:

Արի՛, արի՛, դու ինձ տար,
Մի թողնի խեղճ ու անճար,

Սրտով սիրած յարդ եմ,
Թե չէ կլնեմ վշտահար:
Դու ես իմ միակ յարը,
Չունեմ ուրիշ հոգատար,
Սոխակն է վարդի տերը,
Դու ես միակ վերքիս ճար:

Արի՛, արի՛, դու ինձ տար,
Մի թողնի խեղճ ու անճար,
Սրտով սիրած յարդ եմ,
Թե չէ կլնեմ վշտահար:

Երբ մոտս չես, քուն չունեմ,
Ինձ արբեցնող մեխակս,
Ու ոչ մի տեղ տուն չունեմ,
Ինձ հովանող տնակս:

Արի՛, արի՛, դու ինձ տար,
Մի թողնի խեղճ ու անճար,
Սրտով սիրած յարդ եմ,
Թե չէ կլնեմ վշտահար:

Տեսքով կտրիճ իգիթ ես,
Չկա քեզ համանման,
Արևի պես շողում ես,
Ոչ մեկը չի քեզ նման:

Արի՛, արի՛, դու ինձ տար,
Մի թողնի խեղճ ու անճար,
Սրտով սիրած յարդ եմ,
Թե չէ կլնեմ վշտահար:

ԴՈՒ ԻՄ ՅԱՐՆ ԵՍ



Թեկուզ բութ դանակով մորթես, դու իմ յարն ես,

Թեկուզ առանց պարան խեղդես, դու իմ յարն ես,

Չէ՛, չէ՛, չէ՛, չեմ վախենա քո սարսափներից, տված ահերից,

Չեմ վախենա եկած մահից,

Սիրականի տված ահից,

Թեկուզ կրակ գա քեզանից,

Չէ՛, չէ՛, չէ՛, չեմ վախենա քո սարսափներից, տված ահերից:

ԵՍ ՇԻՐԱԿԻ ՏԱՂԵՐԳՈՒ ԵՄ



Ես Շիրակի տաղերգու եմ,
Իսկ իմ պապերը՝ սոխակներ,
Զավակներս՝ խելքի ծովակ,
Անուշ թոռներս՝ մեխակներ:

Երբ իմ աչքերը բացվեցին,
Երգ ու տաղով լվացվեցին,
Սերս քնարով օծեցին,
Եղան երկնածին աստղիկներ:

Ու գնալով զրնգացին,
Երգերս աշխարհով թնդացին,
Մեռած ոգիներ ցնծացին,
Ինչպես խոխոջուն առվակներ:

Ո՛չ մի հանճար, ո՛չ մի գիտակ
Չի կարեցել լինել բուժակ,
Ինչպես երգն է եղել մշակ,
Սիրո զգացման գործիքներ:

ԵՐԱԶԻՍ ՄԵՋ



Երազիս մեջ մենակ էի, վարդ բուրմունքդ կուզեի,
Կողքդ նստել քեզ գուրգուրել ու փայփայել կուզեի,
Իմ պապակած սրտիս սերը հոգուդ խորքում անթեղվեր, (2)
Դեմքդ ուրախ, աչքերդ վառ, առանց արցունք կուզեի:

Հոգու՛ս հատոր, կյանքիս կտոր տանջող հոգսեր,
Մի՛ մոռանա, որ ամեն օր գալիս էիր ինձ այցի,
Այրում էիր, բոցերի մեջ դարձա ես քեզ դրացի, (2)
Առողջ մտքով, ազնիվ հոգով քեզ վայելչանք կուզեի:

Ձահել սիրտս քեզ է ուզում, մի՛ խռովի ինձանից,
Չար ոգիներ ամենուր կան, մեզ վանում են իրարից,
Դու մի՛ լսիր վհուկներին, հեռո՛ւ մնա չարքերից, (2)
Գիտեմ, անմեղ է քո հոգին, բարի մաղթանք կուզեի:

ԿԹՎՈՐՈՒՀԻ



Սերս շամփուրով դաղեցիր,
Կթվորուհի անո՛ւշ յար ջան,
Գլխիս երկնից հող մաղեցիր, (2)
Կթվորուհի անո՛ւշ յար ջան:

Դո՛ւրս արի մեկ բոյիդ աշեմ,
Իզուր տեղը կյանք չմաշեմ,
Ուսիդ ապրեշում շալ քաշեմ, (2)
Կթվորուհի անո՛ւշ յար ջան:

Հովիվ եմ, սիրովդ եմ տարվել,
Իգիթի պես մեջքիդ կանգնել,
Սրինգովս միշտ քեզ ձայնել (2)
Կթվորուհի անո՛ւշ յար ջան:

Դո՛ւրս արի մեկ բոյիդ աշեմ,
Իզուր տեղը կյանք չմաշեմ,
Ուսիդ ապրեշում շալ քաշեմ, (2)
Կթվորուհի անո՛ւշ յար ջան:

ԵՐԵՎԱՆԻ ՍԻՐՈՒՆ ՏՂԱ



Ինձ փնտրում ես Աբովյանում,
Երևանի սիրու՛ն տղա,
Աչքերիցդ հուր է ցայտում, (2)
Երևանի գարու՛ն տղա:

Երբ քայլում ես, հողն է թնդում,
Արար աշխարհ քեզնով խնդում,
Անգամ թռչուններն են ցնծում, (2)
Երևանի սիրու՛ն տղա:

Դու բուրավետ կարմիր վարդ ես,
Սրտիս միջին անգին զարդ ես,
Աչքերիցդ հուր է ցայտում, (2)
Երևանի գարու՛ն տղա:

ԹՈԹՈԼ ԱՂՋԻԿ



Թե գալիս ես, շախո՛վ արի,
Մեր քաղաքի թոթո՛լ աղջիկ,
Վարդի բույրով, բաղո՛վ արի, (2)
Դու մալաքի, թոթո՛լ աղջիկ:

Ամեն տեսին բույր ես տալիս,
Ջահել մարդկանց հուր ես տալիս,
Պապակ սրտի ջուր ես տալիս, (2)
Դեղն ամենքի, թոթո՛լ աղջիկ:

Քայլում ես, ինչպես աղունակ,
Հագիդ տարազը՝ հուր - կրակ,
Երգում, դայլայլում քանց սոխակ, (2)
Անզոր կամքի, թոթո՛լ աղջիկ:

Դու դարբնի հնոցի բոց ես,
Հերիք ջահել սրտեր խոցես,
Իգիթին բերդ ու ամրոց ես, (2)
Նյութ ես երգի, թոթո՛խլ աղջիկ:

ԹԵ ՉԼԻՆԵՍ



Թե չլինես, էս աշխարհում ի՞նչ կանեմ.
Ինձ կյանք տվող-ապրեցնողը դու ես,
Իզուր տեղը ինձանից մի՛ հեռանա,
Իմ արեգակ-ջերմացնողը դու ես:

Սերը, որ կա, հուր-կրակի պես բան է,
Առանց այրել մարդու հոգի կհանե,
Արբածի պես շատի խելքը կտանե,
Առանց գինու արբեցնողը դու ես:

Մարդ կա, որ ինձ նախանձում է, բամբասում,
Ամեն անգամ չանակում է, փսփսում,
Չի կամենում յարս ունենա ուսում,
Իմ գիտնական – ուսուցանողը դու ես:

ԻՄ ՍԻՐԱԾ ԱՂՋԻԿ



Իմ սիրա՛ծ աղջիկ,
Անունդ Հեղնար է,
Ժպիտդ՝ մեղմիկ, (2)
Ունքդ կամար է:

Թուշդ բե՛ր պաչեմ,
Քեզնից չամաչեմ,
Սերդ ճանաչեմ, (2)
Որ հրավառ է:

Ե՛կ գնանք բաղը,
Վարդերի թաղը,
Իգիթի խաղը, (2)
Նա քեզ հարմար է:

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ



Դու դրախտի կնմանես,

Ալ ծաղկազարդ իմ հայրենիք, (2)

Մորս նման սիրում եմ քեզ,

Կյանքիցս շատ իմ հայրենիք: (2)

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՊԱՂ ԶՈՎԸ



Լենինականի պաղ զովը,
Ղարաֆիլ ես, հոտիդ մատաղ,
Գորկայի արծանի քովը, (2)
Ներկած պռոշներիդ մատաղ:

Ձենդ քաղաքով կզնգա,
Աչքով արի մոտդ եկա,
Մորդ ասա՞ հերի՛ք զնգա, (2)
Թազա հավաս պարիդ մատաղ:

Քո ազգ ու երամն հեյրան է,
Մեջքդ բարալիկ ջեյրան է,
Քեզ տեսնելը մի սեյրան է, (2)
Ճերմակ, մախմուր լանջիդ մատաղ:

Հազել ես ալ կրեպդիշին,
Քո մի պաչը աշխարհ է մին,
Իգիթը ղուրբան յարոյին, (2)
Բարձր կրունկ տոտիդ մատաղ:

ԽԱՄ-ԽՈՊԱՆ ՀՈՂԵՐԸ ԵՐԹԱՆՔ



Յա՛ր ջան, զարթնի՛ր, լույսը բացվեց,
Խամ-խոպան հողերը երթանք,
Պարտիայի ձայնը մեզ կանչեց, (2)
Խամ-խոպան հողերը երթանք,
Հողից հաց քամենք ու խնդանք:

Պատռենք անձայր հողի դոշը,
Դուրումենք լուսերես լոշը,
Հագի՛ր նվիրածս քոշը, (2)
Խամ-խոպան հողերը երթանք,
Հողից հաց քամենք ու խնդանք:

ԽՓԵՑԻՆ ԳԼԽԻՍ



Խփեցին գլխիս, քնարս
տարան,
Քնարս տարան,
Թողին լալագին,
Կրակ տվեցին, տունս այրեցին,
Տունս այրեցին,
Հարկս թանկագին:

Թռավ իմ յարը,
Կտրեց իմ լարը,
Էլ նեցուկ չունեմ,
Փլվեց իմ սարը

ԽԻԶԱԽ ՕԳԱՉՈՒՆԵՐ



Դուք, խիզախնե՛ր զվարթադեմ, բացվող ալ վարդեր,
Բացվող ալ վարդեր, հե՜յ, հե՜յ, բացվող ալ վարդեր,
Մեր մեծ երկրի քա՛ջ զավակներ, ճախրում եք եթեր, (2)
Ճախրում եք եթեր, ճախրում եք եթեր:

ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻ



Հիսուն տարի, հիսուն շարան ապրեցինք,
Ուսը ուսին, խելքը խելքով միասին,
Պատառ հացը երկու տեղով կիսեցինք,
Քարը քարին, շենքը շենքով միասին: (2)

Քանի գնաց մեր վատ կյանքը լավացավ,
Ժողովուրդը հայի ցավով լիացավ,
Այգեստանն ու վարդաստանը շատացավ,
Քաղաք ու գյուղ ծառ-ծաղկունքով միասին: (2)

Ծեր ու մանուկ նոր կյանք առան,
Հարսն ու աղջիկ ուրախացան, խնդացին,
Ջահել տղերք ծափ զարկեցին, երգեցին,
Պար բռնեցին հոծ բանակով միասին: (2)

Երկիրն ելավ մութ աշխարհից դեպի լույս,
Լեռ քարերից գիշեր առան կանաչ բույս,
Անուսները գիտուն դարձան, եղան հույս,
Հարկերը լցվեցին գրքով միասին: (2)

Փակված լեզվի կապանքները քանդվեցին,
Ազատության զանգակները հնչեցին,
Իգիթները ցար ոսոխին ջարդեցին,
Հոկտեմբերյան հատու զենքով, միասին: (2)

ՀԱՅԱՍՏԱՆ



Սովետական արևի տակ, (2)
Ծլեց, ծաղկեց Հայաստանը,
Որդիներով մեկ նպատակ,(2)
Բարգավաճեց Հայաստանը:

Քանդված երկիրը նորոգվեց, (2)
Սարեր-լեռները կանաչեց,
Տխրալի սրտերը բացվեց, (2)
Խինդով լցվեց Հայաստանը:

Հիմա նորն է աճում, փթթում, (2)
Գիտությունը առաջ գնում,
Գյուղ ու քաղաք լուսավորվում, (2)
Հիմքից փոխվեց Հայաստանը:

Սովետի պես թիկունք ունենք, (2)
Խաղաղ, երջանիկ ապրում ենք,
Իգի՛թ, երգով կարկաչում ենք, (2)
Հաղթանակեց Հայաստանը:

ՄԵՐ ՁԱՅՆԸ ՏԱՆՔ



Այսօր տոն է ուրախության, (2)
Մեր ձայնը տանք մեր ընտրյալին,
Ժողովրդի բարօրության, (2)
Մեր ձայնը տանք մեր ընտրյալին:

Մեր ընտրյալն է հայրենասեր, (2)
Ծառա է, ժողովրդասեր,
Ինքը գործուն, աշխատասեր, (2)
Մեր ձայնը տանք մեր ընտրյալին:

Ընտրողները գիտեն սիրել,
Հարգել, պատվել ու մեծարել,
Իր ընտրյալին գործում օգնել,
Մեր ձայնը տանք մեր ընտրյալին:

Իգի՛թ, դու էլ քո ձայնը տուր,
Ընտրության օր է ամենուր,
Երգ ու տաղով ուրախացու՛ր,
Մեր ձայնը տանք մեր ընտրյալին:

ՄԻ ՅԱՐ ՈՒՆԵՄ



Մի յար ունեմ սիրահար,
Գիշեր-ցերեկ տանջում է,
Սերս թողեց անկատար,
Անիմաստ չարչարում է:
Աչքերը շեկ նշի պես,
Թափառում է ղշի պես:

Չորս տարի է խոսք տվել,
Ինձ առնելու հույս տվել,
Բախտս հետն է կապել,
Ձահել կյանքս մաշում է:
Աչքերը շեկ նշի պես,
Թափառում է ղշի պես:

Ինքը իգիթ է տեսքով,
Ինձ թողել է հույսերով,
Աչքս ճամփին մնալով՝
Սիրտս իզուր տանջում է:
Աչքերը շեկ նշի պես,
Թափառում է ղշի պես:

ՄԵԿ ԷԼ ԽՓԻՐ



Էդ քո չինար բոյին մատաղ լինեմ ես,
Մեկ էլ խփիր, մեկ էլ խփիր ֆաշիզմին,
Սաղ աշխարհը ոտքի ելած կաշե քեզ,
Մեկ էլ խփիր, մեկ էլ խփիր ֆաշիզմին,
Մեկ էլ խփիր, որ ջախջախվի հիմնովին:

Դավթի նման դոշդ դե՛մ արա, կանգնի՛ր,
Սվինովդ գերմանու սիրտը խոցի՛ր,
Քո արյունով հայրենիքը պաշտպանի՛ր,
Մեկ էլ խփիր, մեկ էլ խփիր ֆաշիզմին,
Մեկ էլ խփիր, որ ջախջախվի հիմնովին:

Վարդանի պես միտքդ է արի ու պայծառ,
Նրա նման կամքդ է երկաթ ու արդար,
Իգիթը քեզ պիտի երգի անդադար,
Մեկ էլ խփիր, մեկ էլ խփիր ֆաշիզմին,
Մեկ էլ խփիր, որ ջախջախվի հիմնովին:

ՅԱՐՍ



Յարս կոմսոմոլիստ է,
Բաղերի բլբուլ, (2)
Ապագա կոմունիստ է,
Սարերի սմբուլ: (2)

Յարս բանակային է,
Բաղերի բլբուլ, (2)
Դիպուկ հրացանակիր է,
Սարերի սմբուլ: (2)

Յարս երիտասարդ է,
Բաղերի բլբուլ, (2)
Բոյը բարձր չինար է,
Սարերի սմբուլ: (2)

Յարս պարաշյուտիստ է,
Բաղերի բլբուլ, (2)
Օդում ճախրող արծիվ է,
Սարերի սմբուլ:(2)

Իգիթն հայրենասեր է,
Բաղերի բլբուլ, (2)
Հայրենիքի պաշտպան է,
Սարերի սմբուլ: (2)

ՅԱՐԻՑՍ ՆԱՄԱԿ ՍՏԱՑԱ



Յարիցս նամակ ստացա,
Հեռու տեղից, խորը տեղից,
Սրտի խորքից բարև առա,
Հեռու տեղից, խորը տեղից,
Քաղցր լեզվից, (2)
Շրթունքներից:

Գրում է, թե կարոտել է,
Յարի համար տանջվել է,
Ամեն հիշելիս տխրել է,
Հեռու տեղից, խորը տեղից,
Անուշ լեզվից, (2)
Շրթունքներից:

Ես էլ այստեղ յարիս սիրով,
Սպասում եմ վառ կարոտով,
Այրվում եմ նրա փափագով,
Հեռու տեղից, խորը տեղից,
Իգիթ յարից, (2)
Շրթունքներից:

ԶԱՐՈ ՋԱՆ



Կարոտել եմ տեսությանդ, Զարո՛ ջան,
Սիրեկա՛ն յարո ջան,
Էսօր-էգուց երթալու եմ, Զարո՛ ջան, յարո՛ ջան, (2)
Կոմսոմոլկա դարո՛ ջան:

Գիշեր-ցերեկ չի հեռանում աչքիցս,
Սիրեկա՛ն յարո ջան,
Հայտնի ուստի ղալմով քաշած զարդերդ, վարդերդ, (2)
Փունջ-փունջ կապած մազերդ:

Նամակդ աչքերս լցրեց արցունքով,
Սիրեկա՛ն Զարո ջան,
Սիրտս էրեց, հորեց, խորեց խոսքերդ, բառերդ, (2)
Հատ-հատ շարած տառերդ:

Իգիթին սիրտ չի մնացել սպասելու,
Սիրեկա՛ն Զարո ջան,
Սիրտս մարում, չի համբերում կարոտից, (2)
Դե, արի՛, Զարո՛ ջան:

ՇԱՏ ՍԻՐՈՒՆ ԵՍ



Շատ սիրուն ես, մարա՛լ աղջիկ,
Նայողին էշխ ես տալիս,
Ամեն անգամ քեզ տեսնելիս,
Անցողին քեֆ ես տալիս:
Հագել ես դու կարմիր ատլաս,
Քեզ նայողին կանես մաս-մաս:
Հեզ եղնիկի նմանակ ես,
Դու վարդագույն մեխակ ես,
Վարդ, սուսամբար, մանուշակ ես,
Անուշ-անուշ բույր ես տալիս:
Դե, կանգնի՛ր քո բոյը տեսնեմ,
Հետս խոսի՛ր, սոյդ տեսնեմ:

ՇԱՐՄԱՂ ՈՒՍԻԴ



Ճերմակ ուսիդ ապրեշումե շալ կուզեմ,
Մատիդ մատնուն յաղութ, ալմաստ, լալ կուզեմ,
Շարմաղ դոշիդ ոսկեջրած նալ կուզեմ, ա՜խ,
Ինձ այրում ես խալերով,
Հագիդ նախշուն ալերով,
Ցերեկ-գիշեր տանջում ես,
Էդ քո ղալմաղալերով,
Սիրող յարիդ ես սրտով հալալ կուզեմ:

ՈՎ ԱՊՐՈՒՄ Է ՍՈՎԵՏՆԵՐՈՒՄ



Կյանքն է դառել ջահելի պես, նորապսակ փեսի նման,
Ապրողը քեֆ է ստանում հարսանիքատեսի նման,
Լարին տալիս գովք է անում դաստա աշուղների նման,
Մեր երկրի կյանքն է ուրախ, նորապսակ հարսի նման:

Ով ապրում է սովետներում,
Նա է ապրում ուրախ, զվարթ,
Ով ապրում է մեր երկրում,
Նա է ապրում խաղաղ, անդարդ:

Գարնան ծաղիկ նոր ծիլերի մեր երկրում թիվը շատ է,
Ժողովրդի հերոսների, տաղանդների թիվը շատ է,
Ծայրերից ծայր նվաճողներ-հաղթողների թիվը շատ է,
Ինչպես լողվոր կամ թե արծիվ նվաճողների տեգի նման:

Ով ապրում է սովետներում,
Նա է ապրում ուրախ, զվարթ,
Ով ապրում է մեր երկրում,
Նա է ապրում խաղաղ, անդարդ:

ՉՈՒՆԵՄ



Ուր էլ լինես՝ իմն ես դու,
Բացի քեզնից՝ էլ յար չունեմ,
Իմ սիրտը գրավել ես դու,
Իմ կյանքին ես սատար չունեմ:

Թափառելով ման եմ գալիս,
Բժիշկ ու ճար չկա վերքիս,
Ցավերս խոր մղկտալիս,
Զօր ու գիշեր դադար չունեմ:

Կորցրել եմ իմ գոհարը,
Կյանքիս շողուն անգին քարը,
Սիրուս տավիղը, քնարը …
Տաղերիս ձայնալար չունեմ:

Իգի՛թ, ասում են՝ դիմացի՛ր,
Չար մարդկանցից հեռացի՛ր,
Երբ վատ բան տեսնես, հեռացի՛ր,
Անձիս մոտ բարերար չունեմ:

ՉԵՄ ԳՏՆԻ



Ուր էլ գնամ՝ քեզնից լավին չեմ գտնի,
Սիրու՛ս արև, կյանքիս բարև չեմ գտնի,
Թե պատահի՝ քեզնից հեռու ես լինեմ, (2)
Քաղցր ձայնդ, տաքուկ շունչդ չեմ գտնի:

Դու ես միակ իմ արևը կենսական,
Բացի քեզնից՝ չունեմ ուրիշ սիրեկան,
Իմ տաղերի նուրբ մեղեդին դյութական, (2)
Ու քեզնից զատ՝ ուրիշ տավիղ չեմ գտնի:

Ես Իգիթն եմ, օտար աշխարհ եմ անցել,
Ոսկյա դռներ, անդաստաններ եմ անցել,
Գետեր, ծովեր, օվկիանոսներ եմ անցել, (2)
Քո բյուրեղյա ակն-աղբյուրը չեմ գտնի:

ՍԱՍՄԱ ՍԱՐԵՐՈՎՆ ԱՐԻ



Վագրից ուժեղ, հսկայից բարձր Դավիթ,
Սարեր, ձորեր դղրդալով մեզ արի,
Փայլուն սուրդ ձեռքերումդ պինդ բռնած,
Ձիուդ սանձը ոլորելով թե՛զ արի,
Սարեր, ձորեր դղրդալով մեզ արի:

Արի՛ մեզ մոտ, Սասմա սարերովն արի,
Արի՛ մեզ մոտ, գալդ լինի թող բարի:

ՍԱՐԵՐԻ ՃՅՈՒՆԸ



Սարերի ճյունը չի հալվել,
Սիրտս գարուն տեսնել կուզե,
Հոգսերս քամուն եմ տվել,
Աչքս յարիս տեսնել կուզե:

Իմ հոգսերը վերացել են,
Յարիս գալը մոտեցել է,
Յաղի սիրտը սևացել է,
Սիրտս գարուն տեսնել կուզե:

Շատ դժվար է համբերելը,
Ուրիշ սիրեկան ճարելը,
Սիրածին կարոտ քաշելը,
Աչքս յարիս տեսնել կուզե:

Թողե՛ք ինձ չմեղադրեն,
Նեղ օրերիս նման ապրեն,
Չորս տարի առանց յար ապրեն,
Սիրտս գարուն տեսնել կուզե:

Իգիթի երգերն են ուրախ,
Սիրտը զվարթ, չի քաշում ախ,
Ես էլ հիմա կերգեմ նոր խաղ,
Աչքս յարիս տեսնել կուզե:

ՍԱՐԵՐՈՒՄ ԱՊՐԱԾ



Սարերում ապրած գեղեցի՛կ աղջիկ,
Վարդի պես նոր ես կոկոն բաց ելած,
Երգդ զնգուն է սոխակից քաղցրիկ,
Տեսքդ նման է լուսնին ամոթխած:

Լավ է, որ մի օր հյուր գաս իմ այգում,
Մեկտեղ երազենք վարդերի գրկում,
Նայում եմ, թե երբ կգաս, չեմ տեսնում,
Արի՛, տես՝ ինչպես երգդ եմ երգում:

Եկ Իգիթի հետ երգենք մեր սերը,
Ամբողջ մարդիկը լսեն, իմանան,
Որ մենք ենք սիրո մեր կյանքի տերը,
Եվ թող ամենքն էլ սիրել իմանան:

ՍԵՐ ՈՒՆԵՍ



Ինձ ասում են՝ սեր ունես,
Իգիթի պես տեր ունես,
Կյանքում միշտ զգու՛շ եղիր,
Թշնամու ծուղակ չընկնես:

Սերը կույր է ամենուր,
Չի ճանաչում դրացի, հյուր,
Ունեցի՛ր զուլալ աղբյուր,
Կյանքում տղմի մեջ չընկնես:

Գիտեմ, արդ ջահել ես,
Ջահելից էլ ահել ես,
Ով որ ջան է ասում քեզ,
Դու նրան հավատում ես:

Ես Իգիթն եմ, ահ չունեմ,
Ստերի մեջ շահ չունեմ,
Միայն մի սիրած ունեմ,
Դու էլ դավաճանում ես:

ՍԵՐԴ ՍԻՐՏՍ ԳՑԻՐ ԱՆՑԱՐ



Սերդ սիրտս գցիր, անցար,
Վիրավոր սոխակի նման,
Ինձ թողեցիր մորմոքալով,
Բազմավերք անճարի նման:

Հիվանդ թողիր,
Դարձա մոխիր,
Մեռնում եմ ես,
Հասի՛ր, օգնի՛ր:*

Դարձի՛ր, մեկ բոյիդ մտիկ տամ,
Կրծքիս սեղմեմ՝ հանգստանամ,
Շունչդ առնեմ՝ առողջանամ
Հոգեդարձ հիվանդի նման:

Երբ որ մեռնեմ, ախ կքաշես,
Վրաս սև ատլաս կքաշես,
Իգիթ չես գտնի, կմաշվես,
Սևատարազ կույսի նման:

* Այս 4 տողերը կրկնվում են ամեն տնից հետո

ՍԻՐԵԿԱՆ ՋԱՆ



Սիրեկա՛ն ջան, ես քո արևին մատաղ,
Հույս ես տալիս, ես քո հույսերին մատաղ,
Կապած գոտուդ ոսկե շողերին մատաղ,
Խոսք ես ասում, համով բառերիդ մատաղ:

Սիրեկա՛ն ջան, աշխարհ չկա քեզ նման,
Քո և քո անբասիր գործերի նման,
Քո շինած ամրակուռ ամրոցի նման,
Քո անառիկ լեռ ամրոցներին մատաղ:

Սիրեկա՛ն ջան, միայն մի փափագ ունեմ,
Ես քեզ առնեմ և քո պատկերը գրկեմ,
Իմ վաղեմի բաղձանքները կատարեմ,
Իգիթական քո տեսությունին մատաղ:

ՍԻՐՈՒՀԻ



Ձայնդ քնքուշ սոխակի է նմանվում,
Արի՛ մոտս, երգեր ասա՛ սիրուհի՛,
Զօր ու գիշեր սերդ սիրտս ա էրում,
Քո վառ էշխից կյանքս կես ա, սիրուհի՛:

Գլխիդ լաչակը ատլասից է քաշած,
Զույգ թևերդ ասես ռանդով է տաշած,
Հագիդ խաս շորերը գույնզգույն նախշած,
Ինձ եղի՛ր հարս, ես քեզ փեսա, սիրուհի՛:

Էսքան տարի մտածմունքով տանջվեցի,
Հուր-հավիտյան սիրո ցավեր քաշեցի,
Իգի՛թ, քանի՞ անքուն գիշեր մաշեցի,
Շատ լավ ու վատ երազ տեսա, սիրուհի՛:

ՍԻՐՈՒՀԻՍ



Ասում են, թե լաց ես եղել,
Վազելով եկա, սիրուհի՛ս,
Վարդենու նման կարմրել,
Թունդ կարմրել,
Դեմքդ այրել,
Հևալով եկա, սիրուհի՛ս:

Ես եկա, որ քեզ գուրգուրեմ,
Աչքերդ մետաքսով սրբեմ,
Քաղցրադայլայլ ձայնդ լսեմ,
Ձայնդ լսեմ,
Ու սփոփեմ,
Խաղերով եկա, սիրուհիս:

Երբ մոտդ եմ ես, հոգս չունեմ,
Սիրտս ուրախ զվարթուն եմ,
Դու իմ վարդն ես, ես սոխակդ եմ,
Ես սոխակդ եմ,
Սիրահարդ եմ,
Երգելով եկա, սիրուհի՛ս:

ՍՈԽԱԿ



Սոխա՛կ, քեզ նման ոչ մի թռչուն չի սիրում վարդին,
Քո պես տանջվելով՝ սիրո բոցում սպասում վարդին,
Եվ ուզում ես տեսնել սիրուհուդ աչքերը վարդին, (2)
Այդպես շարունակ էլ չես տեսնում բացվելը վարդին:

Ափսո՜ս, քո վրա նազ կարմիր վարդն է անտարբեր,
Որքան նրան սիրում ես, նա դեպի քեզ չունի սեր,
Աշխարհի կարգն այդպես է հակառակ, անտարբեր, (2)
Սիրողին անսերն է մշտական դավաճան վարդին:

Իգիթն էլ քեզ սիրում է՝ իր քնքուշիկ վարդին,
Արշալույսի հետ նստում, նայում յարի աչքերին,
Բայց երբեք չի նկատում բացվելը յարի թերթերի, (2)
Ու քո նման չի տեսնում բացվելը վարդին:

ՎԵ՛Ր ԿԱՑ, ՍԻՐՈ՛ՒՆ ԿԻՆՍ



Ես եկել եմ պատերազմի դաշտիցը,
Վե՛ր կաց, սիրու՛ն կինս, վե՛ր կաց, թառլանս,
Թշնամուն սարսափ, մահ տվող վաշտիցը, (2)
Վե՛ր կաց, սիրու՛ն կինս, վե՛ր կաց, թառլա՛նս:

Գրած նամակդ ստացա ճակատում,
Ուրախացա, քեզանից եմ ստանում,
Սիրտս հանկարծ սկսեց լաց ու կոծում, (2)
Վեր կաց սիրուն կինս, վեր կաց թառլանս:

Գրել էիր. «Այլևս ինձ չսպասես,
Գնալու եմ ուրիշին, չեմ սիրում քեզ,
Քանի ջահել եմ, կյանք կուզեմ վարդի պես»: (2)
Վե՛ր կաց, սիրու՛ն կինս, վե՛ր կաց, թառլա՛նս:

Ասա՛, տեսնեմ, նամակդ ո՞վ է գրել,
Որ ինձ դու ցանկացել ես մահ պատճառել,
Գուցե չար մարդիկ են քեզ թելադրել, (2)
Վե՛ր կաց, սիրու՛ն կինս, վե՛ր կաց, թառլա՛նս:

Եթե այդպես է, բարի վայելում քեզ,
Թող Իգիթի կյանքն էլ անցնի այդպես,
Ես էլ մի օր կին կգտնեմ բախտակեզ, (2)
Վե՛ր կաց, սիրու՛ն կինս, վե՛ր կաց, թառլա՛նս:

ՏԱՐԱՆ



Ես մի կարմիր վարդ ունեի,
Պոկեցին թփիցս տարան, (2)
Նուրբ փայփայված զարդ ունեի,
Խլեցին կրծքիցս տարան: (2)

Մտան իմ անթառամ այգին,
Տրորեցին ծաղկունք անգին, (2)
Քանդեցին պատնեշ ահագին,
Հովասուն վրանս տարան: (2)

Տարան վարդենիս, աշխարհիս,
Կոտրեցին տավիղս, լարս, (2)
Կյանքիս հատորյակս, լարս,
Կենսատու արևս տարան: (2)

Ինձ թողեցին մորմոքալով,
Կորուստս փնտրելով, լալով, (2)
Յար կանչելով ու ողբալով,
Սիրասուն յարս տարան: (2)

ՏԵՐ ԵՆՔ ԴԱՐՁԵԼ



Մեր երկիրը քանց դրախտ է,
Բաղ ու բաղչի տեր ենք դարձել,
Կյանքը ուրախ, երջանիկ է, (2)
Խաղ ու տաղի տեր ենք դարձել:

Մեր երկրում ծաղիկներ կան,
Շուշան, նարգիզ ու բալասան,
Տուղտ, մանուշակ, ալ վարդարան, (2)
Բուրաստանի սեր ենք դարձել:

Մեր երկիրը մի մեծ բաղ է,
Նրա մեջը տասնհինգ թաղ է,
Դհոլ, զուռնա անուշ խաղ է, (2)
Հայտնի քեֆասեր ենք դարձել:

Այգին հարուստ և անթառամ,
Ոտքերի տակ սեգ զարդարան,
Դեմքեր ժպտուն, արեգական, (2)
Իրականաբեր ենք դարձել:

Իգի՛թ, երազ տեսար էսօր,
Լուսաճաճանչ կյանքը մեր նոր,
Երազդ, թե ճիշտ լիներ որ, (2)
Արևաշողներ ենք դարձել:

ՏՂԵՐՔ



Տղեք եկեք քեֆ անենք,
Ասենք ջան-ջան,
Սրտերից ոխը հանենք, (2)
Լինենք բարեկամ:

Երբ ծնվել ենք, պիտ մեռնենք,
Ասենք՝ անու՛շ ջան,
Իրար հարգենք, պատվենք, (2)
Գովքի մեծարման:

Հարկավոր չէ քեն պահել
Լավ դրացու դեմ,
Որքան կուզես վատ լինեն (2)
Մեկ մեկու ընդդեմ:

Ով քեն պահի՝ դեղ է պետք,
Դեղագործ չկա,
Թեկուզ հազարներ մսխի, (2)
Փրկություն չկա:

ՈՒՐ ԿԳԱՍ

(զուգերգ)



Աղջիկ Կոմբայնդ թողել կգաս,
Բեղդ սրելով կգաս,
Գործը եռում է չորս կողմ, (2)
Ինձ նայելով՝ ու՞ր կգաս:

Տղա Կգամ սերս առնելու,
Սիրտդ տեղից հանելու,
Թե նշանի խոսք չտաս, (2)
Կոլխոզն իրար խառնելու:

ՔԱՐՏԱԾ ՅԱՐՍ



Ամեն անգամ բանվոր յարս
Գործից հետո տուն է գալիս,
Սեղան բազմում մեկուճարս,
Դեմքին անուշ գույթ է գալիս:

Սիրտը մաքուր, ինչպես զառ վարդ,
Գործով արի, իսկական մարդ,
Հոգուս գանձարան, կյանքիս զարդ,
Միշտ ծափ ու ծիծաղ է տալիս:

Երբ խոսում է, սիրտ է բացում,
Հետս մեղրածոր զրուցում,
Մեղմաշունչ համբույր մատուցում,
Մեխակի բուրմունք է տալիս:

Առավոտյան, երբ լուսանում,
Արևից առաջ է վազում,
Մուրճը ձեռքին սազին զարկում,
Սոխակի զիլ կանչ է տալիս:

Ինքը կտրիճ հերոսի պես,
Մեկ հարվածով անում երկկես,
Բազկով քաջարի, սրատես,
Օտարին սարսափ է տալիս:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան ……...3
Աշուղ Իգիթի երգերի բովանդակությունը ……....12
Երգերի բանաստեղծական կառուցվածքը …….……24
Երգերի Տաղաչափական առանձնահատկությունները ...….28
Ամփոփում ……..34
Անտիպ երգեր…….37

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

ՀԱՍՄԻԿ ԱՓԻՆՅԱՆ

Սիրո երգիչը. աշուղ Իգիթ

Պատասխանատու խմբագիր՝
արվեստագիտության թեկնածու Հ. Հարությունյան

Խմբագիրներ՝
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ս. Հայրապետյան
արվեստագիտության թեկնածու՝ Ա. Բաղդասարյան

Սրբագրիչ՝ Ռ. Հովհաննիսյան
Համակարգչային շարվածքը՝ Լ. Կոստանյան
Նոտային տեքստերի շարվածքը՝ Ե. Վարոսյան

Երևան, «Գիտություն» հրատ, 2009